



Funded by the European Union  
Ֆինանսավորվում է եվրոպական միության կողմից



# ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ

## ԱՐՑԱԽԻՑ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Սույն ուսումնասիրությունը պատրաստվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության (ԻՀԱ) «Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության մեխանիզմների ուժեղացում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսական աջակցությամբ:  
Ուսումնասիրության բովանդակության պատասխանատուն «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն է և պարտադիր չէ, որ այն արտացոլի ԵՄ տեսակետը:

---

Ուսումնասիրությունը հաստատվել է Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ցանցի խորհրդի 2024 թվականի դեկտեմբերի 24-ի նիստում:

Ուսումնասիրությունը պատրաստել են «Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության մեխանիզմների ուժեղացում» ծրագրի» փորձագետ, իրավաբան Մարիամ Զադոյանը, ծրագրի իրավաբան՝ Մարիաննա Ավագյանը, խորհրդատու՝ Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ Կարեն Զադոյան:

Ուսումնասիրությունից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

**© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, 2025**

ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7. գրասենյակ 2

Հեռախոս՝ +37410 540199

Էլ. փոստ՝ [info@armla.am](mailto:info@armla.am)

Վեբ կայք՝ <https://armla.am/>

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	6
ՆԱԽԱԲԱՆ.....	7
I. ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ .....	9
II. ԱՐՑԱԽԻՑ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....	13
1. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՃԱԿ.....	13
1.1. «Փախստականի և ապաստանի մասին» ՀՀ օրենք և ՀՀ կառավարության N 1864-Ն որոշում.....	13
1.1.1. Իրավական ակտի ամփոփ նկարագիրը:.....	13
1.1.2. Իրավական ակտի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:.....	14
1.2. ՀՀ քաղաքացիության ընդունման պահանջ.....	15
2. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ.....	16
2.1. ՀՀ կառավարության N 169-Լ որոշում .....	16
2.1.1. Իրավական ակտի ամփոփ նկարագիրը:.....	16
2.1.2. Իրավական ակտի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:.....	17
2.2. ՀՀ կառավարության N 710-Լ որոշում .....	20
2.2.1. Իրավական ակտի ամփոփ նկարագիրը:.....	20
2.2.2. Իրավական ակտի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:.....	21
3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՁԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	26
3.1. Միանվագ դրամական աջակցություն: ՀՀ կառավարության N 1675-Լ որոշում .....	26
3.1.1. Իրավական ակտի ամփոփ նկարագիրը:.....	26
3.1.2. Իրավական ակտի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:.....	28
3.2. Կեցության ծախսեր. ՀՀ կառավարության N 1763-Լ որոշում և N 1833-Լ որոշում .....	31
3.2.1. Իրավական ակտերի ամփոփ նկարագիրը: .....	31
3.2.2. Իրավական ակտերի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:.....	34
3.3. Առաջնային սպառողական ծախսեր. ՀՀ կառավարության N 1957-Լ որոշում .....	42
3.3.1. Իրավական ակտի ամփոփ նկարագիրը:.....	42
3.3.2. Իրավական ակտի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:.....	43

3.4.	«Պետական կենսաթոշակների մասին» օրենք և ՀՀ կառավարության N 665-Ն որոշում 44	
3.4.1.	Իրավական ակտի ամփոփ նկարագիրը:.....	44
3.4.2.	Իրավական ակտի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:.....	46
3.5.	Պետական նպաստներ.....	48
3.5.1.	Իրավական կարգավորումների ամփոփ նկարագիրը.....	48
3.5.2.	Իրավական ակտերի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:....	49
4.	ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ.....	51
4.1.	ՀՀ կառավարության N 57-Լ որոշում և N 1756-Լ որոշում.....	51
4.1.1.	Իրավական ակտի ամփոփ նկարագիրը:.....	51
4.1.2.	Իրավական ակտերի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:....	52
5.	ՏԻՆԱՆՍՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	54
5.1.	ՀՀ կառավարության N 2326-Ն որոշում և N 481-Ա որոշում.....	54
5.1.1.	Իրավական ակտերի ամփոփ նկարագիրը:.....	54
5.1.2.	Իրավական ակտերի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:....	56
6.	ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ.....	59
6.1.	Դատական ակտերի ճանաչում.....	59
6.2.	Քաղաքացիական կացության ակտեր.....	61
6.2.1.	ՔԿԱԳ մարմինների կողմից փաստաթղթերի վերականգնում.....	61
6.2.2.	Նոտարական կարգով փաստերի հաստատում.....	63
6.3.	Գույքային իրավունքներ հաստատող փաստաթղթեր.....	63
6.3.1.	Կադաստրային փաստաթղթերի վերականգնում.....	63
6.3.2.	Ժառանգության իրավունքի փաստաթղթերի տրամադրում.....	64
6.4.	Զինվորական հաշվառման փաստաթղթեր.....	66
7.	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.....	68
7.1.	Անվճար կրթություն. ՀՀ կառավարության N 1762-Լ որոշում և N 2291-Լ որոշում.....	68
7.1.1.	Իրավական կարգավորումների ամփոփ նկարագիրը.....	68
7.1.2.	Իրավական ակտերի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:....	69
8.	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ.....	70
8.1.	Անվճար բժշկական օգնություն. ՀՀ կառավարության N 318-Ն որոշում.....	70
8.1.1.	Իրավական կարգավորումների ամփոփ նկարագիրը.....	70
8.1.2.	Իրավական ակտերի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:....	71

9.	ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ .....	72
9.1.	Որոշումների կայացման գործընթացում մասնակցության բացակայություն .....	72
9.2.	Ընթացիկ գույքագրման բացակայություն .....	72
9.3.	Իրազեկման և ուղղորդման համակարգի բացեր .....	73
III.	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	74

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՀ	Արցախի Հանրապետություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԻՀԱ	Իրավաբանների հայկական ասոցիացիա
ԼՂ	Լեռնային Ղարաբաղ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄՈԳ	Միջին որակական գնահատական
ՄՄԾ	Միասնական սոցիալական ծառայություն
ՄՔԾ	Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՔԿԱԳ	Քաղաքացիական կացության ակտերի գրանցում
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՕՇ	Օպերատիվ Շտապ

## ՆԱԽԱԲԱՆ

2023 թվականին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի (այսուհետ՝ ԼՂ) դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով Արցախից բռնի տեղահանված ավելի քան 100,000 հայերի համար Հայաստանում ինտեգրման գործընթացը դարձել է առանցքային մարտահրավեր: Տեղահանված անձինք բխվում են մի շարք համակարգային խնդիրների, ներառյալ ֆինանսական միջոցների սղությունը, իրավական գիտելիքների պակասը, անհրաժեշտ փաստաթղթերի բացակայությունը և պետական կառույցների հետ արդյունավետ հաղորդակցման մեխանիզմների բացը: Այս խոչընդոտները էականորեն սահմանափակում են նրանց՝ արժանապատիվ կյանքի վերականգնման, հասարակության մեջ լիարժեք ինտեգրման և հիմնարար իրավունքների իրացման հնարավորությունները:

Այս մարտահրավերներին արձագանքելու նպատակով, 2024 թվականի փետրվարի 1-ից Իրավաբանների հայկական ասոցիացիան (այսուհետ՝ ԻՀԱ), Եվրոպական միության աջակցությամբ, նախաձեռնել է «Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության մեխանիզմների ուժեղացում» ծրագիրը: Ծրագրի հիմնական նպատակներն են՝

1. Ապահովել ԼՂ-ից բռնի տեղահանվածների ինտեգրումը Հայաստանում իրենց բնակության նոր համայնքներում՝ իրավունքների պաշտպանության մեխանիզմների ուժեղացման միջոցով:
2. Իրականացնել նրանց իրավական խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ:
3. Ապահովել նրանց իրավական իրազեկության և արդարադատության հասանելիության մակարդակի բարձրացումը:
4. Ներդնել անվճար իրավաբանական աջակցության համակարգ՝ բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության համար:

Այս նպատակների իրականացման համար ծրագրի շրջանակներում բռնի տեղահանված և խոցելի (սոցիալապես անապահով, գործազուրկ, հաշմանդամ, ուսանող, կին և այլն) անձանց ցուցաբերվում է անվճար իրավաբանական աջակցություն համայնքային շրջայցերի և [Armrights.am](https://armrights.am) առցանց հարթակի միջոցով: Հարթակը ոչ միայն ապահովում է շահառուների հասանելիությունն իրավաբանական խորհրդատվությանն ու տեղեկատվությանը, այլ նաև հնարավորություն է տալիս նրանց ակտիվորեն մասնակցել

առաջացած հարցերի լուծմանը: Այն գործում է որպես իրազեկված որոշումների կայացման, իրավական օգնության և մեղիա տեսանելիության կենտրոն՝ ստեղծելով համապարփակ մոտեցում տեղահանված անձանց բազմազան կարիքների լուծման համար:

Ծրագրի շրջանակներում, առ 2024թ. նոյեմբերի 30-ը, տրամադրվել է 300 իրավաբանական խորհրդատվություն, իսկ շահառուների անհատական խնդիրների լուծման նպատակով պետական մարմիններին հասցեագրվել է 85 գրություն: Իրավաբանական աջակցության ընթացքում առանձնացվել են համակարգային բնույթի խնդիրներ, որոնց արդյունավետ լուծումը հնարավոր է իրականացնել օրենսդրական փոփոխությունների, թիրախավորված որոշումների կայացման կամ այլ իրավական մեխանիզմների մշակման միջոցով:

Խնդիրների բացահայտման և լուծումների մշակման գործընթացում կարևոր դեր է խաղացել նաև 2024թ.ի մարտի 12-ին հիմնադրված [Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների \(այսուհետ՝ ՔՀԿ\) ցանցը](#): Հարցերի հանրային տեսանելիությունն ապահովելու նպատակով արդեն իսկ հրապարակվել է ավելի քան 20 տեսանյութ [«Արցախահայերի իրավական խնդիրները Հայաստանում» հատուկ շարքի](#) շրջանակներում:

Սույն փաստաթղթում վերհանված խնդիրներն ու դրանց լուծման առաջարկները ներկայացվել և ենթարկվել են մանրամասն քննարկման 2024 թվականի նոյեմբերի 19-ին կայացած [«ԼՂ-ից բռնի տեղահանվածների իրավունքներն ու սոցիալական ներառման թեմայով հանրային-մասնավոր երկխոսության ձևաչափով ֆորում»](#)-ի շրջանակներում: Հետագայում աշխատության նախագիծը պաշտոնապես ներկայացվել է ՀՀ կառավարություն և ենթարկվել է միջգերատեսչական շրջանառման՝ ապահովելով համապատասխան մասնագիտական եզրակացությունների և առաջարկությունների ստացումը բոլոր շահագրգիռ պետական մարմիններից: Ֆորումի ընթացքում բարձրացված հարցադրումների և շահագրգիռ գերատեսչությունների կողմից գրավոր ներկայացված դիտարկումների ու առաջարկությունների հիման վրա իրականացվել է սույն հանրային քաղաքականության փաստաթղթի համապարփակ լրամշակում: Վերջնական փաստաթուղթը նպատակաուղղված է Արցախից բռնի տեղահանված անձանց իրավական պաշտպանության ոլորտում առկա մարտահրավերների հաղթահարման համար արդյունավետ մեխանիզմների ներդրմանը:



## I. ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

1. [«Փախստականների և ապաստանի մասին»](#) ՀՀ օրենք, ընդունված՝ 2008 թվականի նոյեմբերի 27-ին
2. [«Պետական կենսաթոշակների մասին»](#) ՀՀ օրենք, ընդունված՝ 2010 թվականի դեկտեմբերի 22-ին
3. [«Պետական նպաստների մասին»](#) ՀՀ օրենք, ընդունված՝ 2013 թվականի դեկտեմբերի 12-ին
4. ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26 N [1864-Ն](#) որոշում «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և դրա տրամադրման կարգը հաստատելու մասին»
5. ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի [N 169-Լ](#) որոշում «Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագիրը և Հայաստանի Հանրապետության առանձին գյուղական բնակավայրերի ցանկը հաստատելու մասին»
6. ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի [N 1675-Լ](#) որոշում «2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվածներին միանվագ դրամական սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին»
7. ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի [N 1763-Լ](#) որոշում «Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին»
8. ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 21-ի [N 1833-Լ](#) որոշում «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված առանձին խմբերի անձանց կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»
9. ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի [N 1957-Լ](#) որոշում «2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված

ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվածներին միանվագ դրամական սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին»

10. ՀՀ կառավարության 16 մայիսի 2024 թվականի [N 710-Լ](#) որոշում «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը և Հայաստանի Հանրապետության առանձին բնակավայրերի ցանկերը հաստատելու մասին»
11. ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 14-ի [N 898-Լ](#) որոշում «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացման կարգը հաստատելու մասին»
12. ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի [N 2326-Ն](#) որոշում «Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա ստեղծած հիմնադրամների, առանձին իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպությունների դրամական պահանջների (գույքային իրավունքների) զիջման դիմաց պետական գանձապետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, հետգնման, մարման առանձնահատկությունները, առանձին իրավաբանական և ֆիզիկական անձանց պարտավորությունների ընտրանքի չափանիշները, ֆինանսական կազմակերպությունների կողմից դրամական պահանջների (գույքային իրավունքների) փոխանցման, փոխանցված դրամական պահանջների (գույքային իրավունքների) վերաբերյալ տեղեկատվության հրապարակման կարգը սահմանելու մասին»
13. ՀՀ կառավարությունը 2024 թվականի ապրիլի 4-ի [N 481-Ս](#) որոշում «Ֆիզիկական անձանց պարտավորությունները ներելու և որպես պետական ֆինանսական աջակցություն ձևակերպելու մասին»
14. ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի [N 57-Լ](#) որոշում «2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին»

15. ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12 [N 1756-Լ](#) որոշում «2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրը հաստատելու մասին»
16. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի [N 665-Ն](#) որոշում ««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին»
17. ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի [N 145-Ն](#) որոշում ««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին»
18. ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի [N 275-Ն](#) որոշում «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին»
19. ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի [N 2291-Լ](#) որոշում «Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ն ընդգրկված Լեռնային Ղարաբաղի սովորողների ուսման վարձի փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու մասին»
20. ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի [N 1762-Լ](#) որոշում «2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված Լեռնային Ղարաբաղում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացրած ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը և տրամադրվելիք կրթաթոշակի առավելագույն չափերը հաստատելու մասին»
21. ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի [N 318-Ն](#) որոշում «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման մասին»

22. ՀՀ կառավարության 2019թ. մայիսի 30-ի [N 642-Ն](#) որոշում «Բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի և այն հիվանդությունների ցանկերը, որոնց դեպքում դեղերը շահառուներին հատկացվում են դրանց արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ, ինչպես նաև այդ բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկված շահառուներին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների միջոցով դեղերի հատկացման և փոխհատուցման կարգը սահմանելու (...)»
23. ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 27-ի [N 568-Ն](#) որոշում «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին»

## II. ԱՐՑԱԽԻՑ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

### 1. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԵՃԱԿ

#### 1.1. «Փախստականի և ապաստանի մասին» ՀՀ օրենք և ՀՀ կառավարության N 1864-Ն որոշում

##### 1.1.1. Իրավական ակտի ամփոփ նկարագիրը:

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Լեռնային դարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և դրա տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1864-Ն որոշմամբ սահմանվել է ԼՂ բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ տրամադրելու ընթացակարգը:

Որոշման համաձայն ժամանակավոր պաշտպանություն տրամադրվում է՝

1) ԼՂ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձանց, բացառությամբ այն անձանց, ովքեր հանդիսանում են օտարերկրյա պետության քաղաքացի:

2) ՀՀ տարածքում կամ ՀՀ-ից դուրս գտնվող այն անձանց, որոնց վերջին հաշվառման հասցեն եղել է ԼՂ-ում:

3) այն անձանց, որոնք չեն ունեցել հաշվառում ԼՂ բնակչության ռեգիստրում, սակայն բնակվել են ԼՂ-ում և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից ԼՂ-ի դեմ սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվելուց հետո հաշվառվել են ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) միգրացիայի և քաղաքացիության ծառայության (այսուհետ՝ ՄՔԾ) կողմից:

Որոշումը չի տարածվում վերոնշյալ բայց այլ պետության քաղաքացիություն ունեցող անձանց նկատմամբ: Ժամանակավոր պաշտպանություն ստացած անձինք ճանաչվում են փախստական՝ համաձայն «Փախստականի և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի: Ժամանակավոր պաշտպանությունը տրվում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը՝ երկարաձգման հնարավորությամբ: Որոշմամբ հաստատվել է նաև ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և տրամադրման կարգը:

**1.1.2. Իրավական ակտի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:**

Իրավական ակտի գործնական կիրառման ընթացքում վեր են հանվել մի շարք խնդիրներ՝ կապված ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայականի տրամադրման շրջանակներում իրավակիրառ պրակտիկայի անհամաչափությունների հետ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը հստակ արգելում է վարչական մարմիններին անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման օբյեկտիվ հիմնավորում, միաժամանակ պարտավորեցնելով անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ: ՆԳՆ իր պաշտոնական դիրքորոշմամբ նշում է, որ պատշաճ կերպով կիրառել է վարչարարության սկզբունքները՝ տարբերակված մոտեցում ցուցաբերելով միայն իրավաբանորեն տարբեր հանգամանքներ պարունակող դեպքերի նկատմամբ:

Այնուամենայնիվ, իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը բացահայտել է համանման իրավական կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ անհամաչափ մոտեցումների առկայություն: Խնդիրն առավել ցայտուն է արտահայտվում խառը քաղաքացիություն ունեցող ընտանիքների պարագայում (երբ ծնողներից մեկը Արցախի Հանրապետության (այսուհետ՝ ԱՀ) քաղաքացի է, մյուսը՝ ՀՀ), երբ նույն ընտանիքի երեխաներից մի մասին տրամադրվում է փախստականի կարգավիճակ, իսկ մյուսներին այն մերժվում է՝ ՀՀ քաղաքացիություն ունենալու հիմնավորմամբ:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն իրողությունը, որ նշյալ խնդիրն ակնհայտ է դարձել հատկապես օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների գործունեության համատեքստում, որտեղ փախստականի վկայականի տրամադրման գործընթացում քաղաքացիության հանգամանքի գնահատման չափանիշները կիրառվում են ոչ միատեսակ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջանում ապահովել վարչական մարմինների կողմից միատեսակ վարչարարության իրականացում և իրավական ակտի կիրառման գործընթացի համակարգված մշտադիտարկում:

## 1.2. ՀՀ քաղաքացիության ընդունման պահանջ

**Մի շարք իրավական ակտերով**, մասնավորապես ՀՀ կառավարության N 710 որոշմամբ հաստատված բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում, **շահառուների համար որպես նախապայման սահմանված է ՀՀ քաղաքացիության ընդունման պահանջը**: Նման իրավակարգավորումը **հակասում է «Փախստականների կարգավիճակի մասին»** 1951 թվականի Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ **ՄԱԿ**) **կոնվենցիայի** և դրա 1967 թվականի արձանագրության հիմնարար **սկզբունքներին**, որոնք երաշխավորում են փախստականների՝ ապաստանի երկրում բնակարանային ապահովման իրավունքը՝ առանց քաղաքացիության ձեռքբերման պարտադիր պայմանի: Միաժամանակ, այն խնդրահարույց է քաղաքացիության ընդունման հետևանքով փախստականի՝ **ծագման երկիր վերադառնալու իրավունքի վրա հնարավոր սահմանափակող ազդեցության տեսանկյունից**, ինչը կարող է խաթարել փախստականի՝ ազատ կամքի դրսևորման և ինքնուրույն որոշումների կայացման իրավունքը:

Համաձայն ՀՀ ՆԳՆ դիրքորոշման՝ ՀՀ կառավարության կողմից իրականացվող բնակարանային ապահովման ծրագիրը նպատակ ունի ապահովելու փախստականների երկարաժամկետ և կայուն ինտեգրումը, ինչի հիմքում դրվել է ՀՀ քաղաքացիության ձեռքբերումը՝ որպես պետության հետ կայուն իրավական կապի հաստատման նախապայման:

Այնուամենայնիվ, գտնում ենք, որ նման հիմնավորումը բավարար չէ և չի համապատասխանում միջազգային իրավական չափանիշներին: Հաշվի առնելով, որ շահառուն որոշակի ժամանակահատվածում բնակտարածքի նկատմամբ լիակատար սեփականության իրավունք չի ունենալու, նպատակահարմար է քաղաքացիության պահանջը սահմանել ծրագրի վերջնական փուլում՝ երբ անձն այլևս պետության նկատմամբ տվյալ բնակտարածքի հետ կապված պայմանագրային պարտավորություններ չի ունենա: Նման մոտեցումը հավասարակշռում է պետության շահերը (երկարաժամկետ ինտեգրման նպատակներ) և փախստականների իրավունքները՝ պահպանելով իրավական կապը պետության հետ, սակայն չդնելով ավելորդ սահմանափակումներ: Բացի այդ, վերջինս համահունչ կլինի միջազգային փախստականական իրավունքի հիմնարար սկզբունքներին և կերաշխավորի փախստականների իրավունքների լիարժեք պաշտպանությունը՝ հատկապես

1951թ. ՄԱԿ-ի կոնվենցիայի ոչ-խտրականության սկզբունքի, ծագման երկիր վերադառնալու իրավունքի պահպանման և ազատ ինքնորոշման իրավունքի տեսանկյունից:

## **2. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

### **2.1. ՀՀ կառավարության N 169-Լ որոշում**

#### **2.1.1. Իրավական ակտի ամփոփ նկարագիրը:**

ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի «Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի մասին» N 169-Լ որոշումը վերաբերում է ԼՂ առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրին: Ծրագրի շահառուներ են համարվում այն ընտանիքները կամ անձինք, ովքեր 2020թ. սեպտեմբերի 27-ի դրությամբ բնակվել են Արցախում՝ ունենալով հաշվառում և վերջին 3 ամիս փաստացի բնակություն, կամ հաշվառում չունենալու դեպքում՝ վերջին 3 տարվա փաստացի բնակություն: Շահառուների շարքին են դասվում նաև այդ ընտանիքներում հետագայում ծնված երեխաները և ժամանակավոր բացակայող անդամները՝ բուժման, ուսման, զինծառայության կամ ազատազրկման պատճառներով:

Հարկ է նշել, որ տվյալ ծրագիրը իրականացվում էր ԱՀ կառավարության հետ համագործակցության շրջանակներում, և ի սկզբանե այդ ծրագրի նպատակն էր Քարվաճառ և Քաշաթաղ վարչական շրջանների վերաբնակիչներին (այն անձանց, ովքեր նախկինում ունեցել են ՀՀ հաշվառում և ունեին փաստաթուղթ, որով հավաստվում էր վերաբնակիչ լինելու հանգամանքը), ովքեր բավարարում էին N 169-Լ որոշմամբ սահմանված պահանջները ՀՀ-ում ապահովել բնակտարածքով:

Աջակցությունը տրամադրվում է հիփոթեքային վարկի միջոցով բնակարան, անհատական բնակելի տուն գնելու կամ կառուցելու համար: Վարկը տրամադրվում է նվազագույնը 10 տարի ժամկետով, բացառապես ՀՀ դրամով:

Պետական աջակցության չափը տարբերակված է ըստ բնակավայրերի: Երևանում այն կազմում է մինչև 8 մլն դրամ մայր գումարի և մինչև 8% տոկոսագումարի համար: Մարզերում՝



համապատասխանաբար մինչև 10 մլն դրամ և 10%, իսկ սահմանամերձ բնակավայրերում՝ մինչև 14 մլն դրամ և 13%:

Երևանում բնակարան ձեռք բերել կարող են միայն նախկինում Երևանում հաշվառում ունեցած անձինք: Ծրագրից կարելի է օգտվել միայն մեկ անգամ, դիմումների ընդունման վերջնաժամկետը 2024թ. հուլիսի 1-ն էր: Ծրագրի շրջանակում դիմումների ընդունման վերջնաժամկետը երկարաձգվել է 3 անգամ, և ծրագրին 01.07.2024թ. դրությամբ չդիմած շահառուներին ընձեռվել է հնարավորություն դիմել ՀՀ կառավարության 2024թ. մայիսի 16-ի N 710-Լ որոշմամբ սահմանված ծրագրին: Նախատեսվում էր աջակցություն տրամադրել 4,308 շահառուի, ինչի համար 2022 թվականին հատկացվել էր շուրջ 3.4 մլրդ դրամ:

Բանկերի մասնակցությունը ծրագրին վերջիններիս նախաձեռությամբ է, և ներկայումս առկա են 4 ֆինանսական կազմակերպություններ (Էվոկաբանկ, Յունիբանկ, Ֆասթ Բանկ և ԱյԴի բանկ), որոնք իրականացնում են վարկավորում վերոնշյալ ծրագրի շրջանակում: Կենտրոնական Բանկի հետ համատեղ մշակված ներքին իրավական կարգավորման շնորհիվ լուծվել է վատ վարկային պատմություն ունեցող շահառուների խնդիրը, ովքեր նախկինում չէին կարողանում մասնակցել ծրագրին, քանի որ հավաստագիրը դիտարկվում էր որպես վարկ: Այս փոփոխությունը հնարավորություն է տվել ժամկետանց պարտավորություններ ունեցող շահառուներին նույնպես օգտվել բնակտարածքի ձեռքբերման հնարավորությունից:

### **2.1.2. Իրավական ակտի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:**

ԻՀԱ հարցմանն ի պատասխան ԱՍՀՆ-ի կողմից 20.01.2025 թվականին տրամադրված պաշտոնական տվյալների համաձայն՝ ՀՀ կառավարության N 169-Լ որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում տրամադրված հավաստագրերի ընդհանուր քանակը 3946 է, որից 3442 հավաստագրեր իրացվել են (բնակտարածք ձեռքբերած շահառուների թիվը), իսկ չիրացված հավաստագրերի քանակը (դեռևս բնակտարածք ձեռք չբերած շահառուների թիվը) 504 է:

Ամսական կտրվածքով բնակտարածքների ձեռքբերման դինամիկան՝ սկսած ծրագրի մեկնարկից մինչև 2024 թվականի նոյեմբեր ամիսը (ըստ ամիսների՝ քանի շահառու է բնակտարածք ձեռք բերել) ներկայացված է ստորև՝

N	Ամիս, տարի	Գործարքների քանակ	Դինամիկա (+)
1.	Հունվար, 2023	98	
2.	Փետրվար, 2023	159	61
3.	Մարտ, 2023	319	160
4.	Ապրիլ, 2023	470	151
5.	Մայիս, 2023	681	211
6.	Հունիս, 2023	817	136
7.	Հուլիս, 2023	991	174
8.	Օգոստոս, 2023	1164	173
9.	Սեպտեմբեր, 2023	1300	136
10.	Հոկտեմբեր, 2023	1472	172
11.	Նոյեմբեր, 2023	1583	111
12.	Դեկտեմբեր, 2023	1748	165
13.	Հունվար, 2024	1866	118
14.	Փետրվար, 2024	1979	113
15.	Մարտ, 2024	2085	106
16.	Ապրիլ, 2024	2215	130
17.	Մայիս, 2024	2353	138
18.	Հունիս, 2024	2516	163
19.	Հուլիս, 2024	2686	170
20.	Օգոստոս, 2024	2800	114
21.	Սեպտեմբեր, 2024	2852	52
22.	Հոկտեմբեր, 2024	2893	41
23.	Նոյեմբեր, 2024	2918	25

Հաշվի առնելով բնակարանային ապահովման ծրագրի սոցիալական բնույթը և շահառու ընտանիքների միջին կազմը՝ ծրագրի ներգործությունը փաստացի տարածվում է առնվազն 15,000 բնակչի վրա: Միննույն ժամանակ, առկա 504 չիրացված հավաստագրերը ներկայացնում են ավելի քան 2,000 բնակչի բնակարանային կարիքներ, ինչը վկայում է, որ ծրագրի իրականացման գործընթացում դեռևս կան հարցեր, որոնք լուծման կարիք ունեն՝ ապահովելու բոլոր շահառուների լիարժեք մասնակցությունը:

**Գործող իրավական կարգավորումները Երևանում բնակտարածք ձեռք բերելու հնարավորությունը սահմանափակում են միայն նախկինում մայրաքաղաքում հաշվառում ունեցած անձանց շրջանակով:** Այս պարագայում տրամադրվող աջակցությունը կազմում է 8 մլն դրամ, մինչդեռ ՀՀ այլ վարչատարածքային միավորներում բնակտարածք ձեռք բերելու դեպքում աջակցության չափը սահմանված է 10 մլն դրամ: Սակայն **անշարժ գույքի ներկայիս**

շուկայական գների պայմաններում սահմանված աջակցության չափը էականորեն զիջում է բնակտարածքների փաստացի արժեքին, ինչը խոչընդոտում է ծրագրի արդյունավետ իրականացումը:

**Խնդրահարույց է նաև կանխավճարի պահանջը**, որը հակասում է աջակցության սկզբունքին և ստեղծում է անհամաչափ ֆինանսական պարտավորություն: Մասնավորապես, անհիմն է կանխավճարի անվերադարձելի լինելը այն դեպքերում, երբ բնակարանի գնահատված արժեքը չի գերազանցում պետական աջակցության սահմանված չափը: Նման պարագայում կանխավճարի պահանջն անտրամաբանական է և առաջացնում է լրացուցիչ ֆինանսական բեռ շահառուների համար:

Բացի այդ, **գործող ժամկետանց վարկային պարտավորություններ** ունեցող շահառուներին մերժվում է բնակտարածքի ձեռքբերման հավաստագրի տրամադրումը: Թեև ԱՍՀՆ դիրքորոշման համաձայն այս խնդիրը կարգավորվել է Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) հետ համագործակցաբար՝ ԿԲ համապատասխան ներքին իրավական կարգավորմամբ, գործնականում շահառուները շարունակում են բախվել այս խնդրին:

**Խնդրահարույց է նաև հատկացվող գումարի օգտագործման սահմանափակումը**: Այն դեպքերում, երբ բնակտարածքը գնահատվում է շահառուին հասանելիք գումարից պակաս, մնացորդը կարող է օգտագործվել միայն վերանորոգման նպատակով, և նախատեսված չէ հնարավորություն՝ այդ գումարով գույք և կենցաղային տեխնիկա ձեռք բերել:

Ծրագրի ներկա իրականացման մեխանիզմները հանգեցնում են շահառուների սոցիալ-տնտեսական վիճակի էական վատթարացման: Մասնավորապես, ֆինանսական պարտավորությունների կուտակումը և վարկային բեռի ավելացումը խաթարում են շահառուների տնտեսական կայունությունը՝ խորացնելով նրանց սոցիալական խոցելիությունը: Այս իրավիճակը պահանջում է ծրագրի ֆինանսական մեխանիզմների անհապաղ վերանայում՝ շահառուների վրա դրվող ֆինանսական բեռը նվազեցնելու նպատակով:

Ըստ այդմ, անհրաժեշտ է իրականացնել հետևյալ փոփոխությունները. վերանայել Երևանում բնակտարածք ձեռք բերելու տարածքային սահմանափակումները և աջակցության չափը՝ հաշվի առնելով շուկայում առկա գները, վերացնել կանխավճարի պարտադիր պահանջը, ձկուն դարձնել հատկացվող գումարի օգտագործման սահմանափակումները, ինչպես նաև ապահովել ժամկետանց վարկային պարտավորություններ ունեցող

շահառուներին բնակտարածքի ձեռքբերման հավաստագրի տրամադրումը՝ ԿԲ ներքին իրավական ակտի համաձայն:

## 2.2. ՀՀ կառավարության N 710-Լ որոշում

### 2.2.1. Իրավական ակտի ամփոփ նկարագիրը:

ՀՀ կառավարության 16 մայիսի 2024 թվականի «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը և Հայաստանի Հանրապետության առանձին բնակավայրերի ցանկերը հաստատելու մասին» N 710-Լ որոշումը սահմանում է ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը: Ծրագրի հիմնական նպատակն է ապահովել տեղահանված անձանց սոցիալական և տնտեսական ներառումը՝ ստեղծելով ՀՀ-ում երկարաժամկետ բնակության պայմաններ:

Աջակցությունն իրականացվում է երեք հիմնական եղանակով՝ բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման հավաստագրի տրամադրում, անհատական բնակելի տան կառուցման հավաստագրի տրամադրում, և գործող հիփոթեքային վարկի մարման աջակցության հավաստագրի տրամադրում:

Ծրագրի հիմնական պայմանները սահմանում են, որ շահառուները պետք է լինեն ՀՀ քաղաքացիներ, ունենան բռնի տեղահանվածի կարգավիճակ, չլինեն ՀՀ կառավարության N 169 որոշմամբ հաստատված բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի շահառու և 2024 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ստացած լինեն հավաստագիր, ինչպես նաև չունենան սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք ՀՀ-ում: Բնակելի տարածքը պետք է ապահովի նվազագույնը 12 քառակուսի մետր մակերես յուրաքանչյուր անդամի համար, իսկ ձեռք բերվող անշարժ գույքի արժեքը չպետք է գերազանցի 55 միլիոն դրամը: Հիփոթեքային վարկի նվազագույն ժամկետը սահմանված է 120 ամիս, որի ընթացքում գույքը չի կարող օտարվել, իսկ կանխավճարի չափը՝ 0 տոկոս:

Ծրագիրն իրականացվելու է 2024-2029 թվականների ընթացքում՝ երեք փուլով: Առաջին փուլում առաջնահերթությունը տրվում է երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին, զոհվածների ընտանիքներին և հաշմանդամություն ունեցող անդամով

ընտանիքներին: Երկրորդ և երրորդ փուլերում աստիճանաբար ներառվում են նաև այլ խմբերի պատկանող ընտանիքներ:

Եթե հավաստագրի իրացման արդյունքում առաջանում է դրական մնացորդ, ապա այն կարող է իրացվել հետևյալ ուղղություններով և սահմանաչափերով՝

- 1) գյուղատնտեսական նշանակության հողամասի գնում՝ մինչև 5 մլն դրամ և
- 2) ծրագրի շրջանակներում ձեռքբերված անշարժ գույքի վերանորոգում՝ մինչև 4 մլն դրամ և
- 3) կահույքի և կենցաղային տեխնիկայի գնում՝ մինչև 2 մլն դրամ:

Դիմումների ներկայացման ժամկետը երկարաձգվել է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

#### **2.2.2. Իրավական ակտի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:**

ՀՀ կառավարության 2024թ. մայիսի 16-ի N 710-Լ որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման սկզբնական փուլում արձանագրվել են որոշակի մարտահրավերներ: Ըստ 12.11.2024թ. ԱՍՀՆ-ի տրամադրած տվյալների, 2024թ. նոյեմբերի 6-ի դրությամբ 1341 դիմումից բավարարվել էր 30-ը: Սակայն հետագա ամիսների ընթացքում իրավիճակը զգալիորեն բարելավվել է: 20.01.2025թ. դրությամբ հավաստագիր ստացած ընտանիքների թիվը հասել է 468-ի, ինչը վկայում է սկզբնական տեխնիկական խնդիրների հաղթահարման մասին: Ընդ որում, արդեն արձանագրվել են հավաստագրերի իրացման դեպքեր, իսկ բազմաթիվ շահառուներ գտնվում են հիփոթեքային վարկավորման գործընթացում: Չնայած արձանագրված առաջընթացին, ծրագրի հետագա կատարելագործման համար անհրաժեշտ է անդրադառնալ մի շարք համակարգային հարցերի՝ ապահովելու դրա առավել արդյունավետ իրագործումը:

#### ***Ա) Շահառուների շրջանակի և դիմումատուների իրավասության պահանջների վերաբերյալ.***

Ծրագրում առկա են իրավակարգավորման սահմանափակումներ և անհստակություններ՝ կապված շահառուների շրջանակի որոշման հետ: Մասնավորապես, ծրագրի իմաստով

շահառուն 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքն է (այդ թվում՝ մեկ անձից բաղկացած): Միևնույն ժամանակ, նշյալ ձևակերպումը խնդրահարույց է հետևյալ պատճառներով:

Նախ, **որոշմամբ չի սահմանվում կամ հղում չի կատարվում այլ իրավական ակտի, որով կսահմանվի «բռնի տեղահանված» եզրույթը:** Թեև 2024թ. հունիսի 14-ի N 898-Լ որոշման համաձայն շահառուների կարգավիճակի ստացման համար հիմք են հանդիսանում ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից հաշվառված բռնի տեղահանվածների տվյալները, սակայն հարկ է նշել, որ գործնականում կիրառման մեջ առկա են լուրջ բացեր: Ծրագրի շահառու հանդիսանալու մերժված դիմումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մերժման հիմքերը ներառում են ընտանիքի անդամներից մեկի բռնի տեղահանված չլինելը:

Մասնավորապես՝ 2020 թվականի տեղահանվածների հաշվառումն իրականացվել է ոչ թե միգրացիայի ծառայության, այլ օպերատիվ շտաբի կողմից տրամադրված ցանկերի միջոցով: Միևնույն ժամանակ, 2023 թվականի բռնի տեղահանվածների պարագայում ևս ոչ բոլորն են միգրացիայի ծառայությունում հաշվառված, ինչը հաճախ պայմանավորված է վարչական սխալներով: Արդյունքում, **այն անձինք, որոնք ներառված չեն նշված ցուցակներում, դուրս են մնում նաև բնակարանային ապահովման ծրագրի շահառուների շրջանակից:**

Թեև հանրային հանդիպումների ընթացքում հայտարարվել է, որ մշակվելու է մեխանիզմ, որով անձինք, ովքեր կարող են բավարար ապացույցներ ներկայացնել իրենց՝ 2020 կամ 2023 թվականներին բռնի տեղահանված լինելու վերաբերյալ, կընդգրկվեն շահառուների ցանկում, գործնականում այդպիսի մեխանիզմ չի կիրառվում: Հետևաբար, **ներկայումս բացակայում են արդյունավետ ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան անձանց ապացուցելու իրենց՝ բռնի տեղահանված լինելու փաստը և վիճարկելու իրենց դիմումների վերաբերյալ կայացված բացասական որոշումները:**

ՀՀ ԱՍՀՆ պարզաբանումներն այն մասին, որ մերժման հիմքերի կարգավորման դեպքում շահառուները կարող են կրկին դիմել և ստանալ հավաստագիրը, ինչպես նաև որ տեխնիկական կամ իրավական կարգավորումներից հետո նախարարության աշխատակիցները կապ են հաստատում մերժված շահառուների հետ, վերաբերում են միայն տեխնիկական բնույթի խնդիրներին: Սակայն, երբ մերժման հիմքը տեխնիկական չէ, այլ

կապված է անձի՝ բռնի տեղահանված լինելը հաստատող ապացույցների ճանաչման հետ, խնդիրը շարունակում է մնալ չուծված:

Բացի այդ, որոշման համաձայն, ծրագրի իմաստով ընտանիքը ծրագրին դիմելու օրվա դրությամբ գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսիններից (միայնակ ծնողից), նրանց՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ 18 տարին չլրացած երեխաներից (այդ թվում՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված), ինչպես նաև ցանկացած այլ անդամից բաղկացած միավորն է, որը որպես ընտանիքի անդամ ներառված կլինի տվյալ դիմում-հայտարարության մեջ: **«Ցանկացած այլ անդամ» ձևակերպումն անհստակ է և կարող է վեճերի տեղիք տալ:**

Թեև ԱՍՀՆ դիրքորոշման համաձայն, եթե որոշմամբ սահմանված չեն անձանց միջև բարեկամական կամ այլ կապի սահմանափակումներ, ապա դա նշանակում է, որ խոսքը չի վերաբերում միայն բարեկամական կապ ունեցող անձանց, այնուամենայնիվ, այս ձևակերպումն իրավակիրառ պրակտիկայում կարող է առաջացնել տարաբնույթ մեկնաբանություններ: Մասնավորապես, հստակեցված չէ, թե արդյոք որևէ երկու անձ, առանց բարեկամական կապի, կարող են ներկայանալ որպես մեկ ընտանիք ծրագրի շրջանակներում: Սա հատկապես խնդրահարույց է հաշվի առնելով, որ բնակարանային պայմանների բարելավման ծրագրերը ենթադրում են երկարաժամկետ համատեղ բնակություն, և ընտանիքի կազմի հստակ սահմանումն էական նշանակություն ունի ծրագրի արդյունավետության համար:

**Խնդրահարույց է նաև ՀՀ-ից բացակայության դեպքում աջակցության դադարեցման կարգը:** Որոշման 14-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, ծրագրով նախատեսված աջակցությունն ամբողջությամբ դադարեցվում է, եթե ընտանիքի 1 անչափահաս անդամը նույն օրացուցային տարվա ընթացքում 183 և ավելի օր գտնվում է ՀՀ սահմաններից դուրս (բացառությամբ որոշակի դեպքերի): Նման դրույթի առկայությունը դժվար է համարել հիմնավորված, հատկապես հաշվի առնելով բռնի տեղահանված անձանց երեխաների հնարավոր կարիքները կրթության, առողջապահության կամ սոցիալական աջակցության ոլորտներում:

Բացի այդ, ծրագրով նախատեսված է **ՀՀ քաղաքացիության ընդունման պարտադիր պահանջ**, մինչդեռ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց զգալի մասը չի ցանկանում կամ պատրաստ չէ անմիջապես ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն, ինչն առավել մանրամասն

վերլուծված է սույն աշխատության «1.2. ՀՀ քաղաքացիության ընդունման պահանջ» ենթաբաժնում: Հենց այս հանգամանքով է պայմանավորված ծրագրին դիմող շահառուների փոքր թիվը: ՀՀ ՆԳՆ-ն իր դիրքորոշմամբ պնդում է, որ բնակարանային ապահովման ծրագիրը միտված է փախստականների երկարաժամկետ և կայուն ինտեգրմանը, որի հիմքում դրված է ՀՀ քաղաքացիության ձեռքբերումը՝ որպես պետության հետ կայուն իրավական կապի հաստատման երաշխիք: Սակայն գտնում ենք, որ այս հիմնավորումը բավարար չէ: Քանի որ շահառուն որոշակի ժամանակահատվածում բնակտարածքի նկատմամբ դեռևս լիակատար սեփականության իրավունք չի ունենա, առավել նպատակահարմար է քաղաքացիության պահանջը տեղափոխել ծրագրի վերջնական փուլ՝ երբ անձն արդեն կատարած կլինի բնակտարածքի հետ կապված բոլոր պայմանագրային պարտավորությունները պետության նկատմամբ:

Ուստի, առկա է շահառուների շրջանակի ընդլայնման և հստակեցման, ինչպես նաև՝ ՀՀ-ից բացակայության դեպքում աջակցության դադարեցման պայմանների վերանայման անհրաժեշտություն: Առավել նպատակահարմար է քաղաքացիության պահանջը տեղափոխել ծրագրի վերջնական փուլ՝ երբ անձն արդեն կատարած կլինի բնակտարածքի հետ կապված բոլոր պայմանագրային պարտավորությունները պետության նկատմամբ: Խնդրի սոցիալական նշանակալիությունը, շահառուների իրազեկվածության ցածր մակարդակը, օրենքով նախատեսված ընդհանուր բողոքարկման կարգով բողոքարկելու գործնական անհնարինությունը և դժվարությունները, ինչպես նաև բաց թողնված ժամկետները պահանջում են ներդնել նախկինում մերժված դիմումների հատուկ վերանայման հնարավորություն և պարզեցված ընթացակարգեր:

***F) Աջակցության ֆինանսական մեխանիզմների և վարկավորման պայմանների վերաբերյալ.***

Առաջին հերթին՝ մեկ շնչին տրամադրվող աջակցության գումարը (3-5 միլիոն ՀՀ դրամ) չի համապատասխանում շուկայական գներին: Արդյունքում, փոքր՝ 1-3 անդամից կազմված ընտանիքները տրամադրված գումարով չեն կարողանում բնակտարածք ձեռք բերել, որոնց համար լրացուցիչ որևէ արտոնություն սահմանված չէ:

Բնակտարածքի ձեռքբերման գործընթացը ավելի է բարդանում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործող որոշման համաձայն՝ մեկ շնչին տրամադրվող աջակցության չափը



**դիֆերենցված է՝ ըստ բնակտարածքի աշխարհագրական դիրքի՝ նախատեսելով առավել բարձր աջակցության չափ ծայրամասային շրջաններում բնակտարածք ձևերը բերելու համար:** Այս մոտեցումը, թեև նպատակ ունի խթանել որոշակի շրջանների բնակեցումը, սակայն էականորեն շեղվում է ծրագրի հիմնական նպատակից և խոչընդոտում դրա արդյունավետ իրականացմանը:

Թեև ԱՍՀՆ դիրքորոշման համաձայն՝ 4 և 5 միլիոն դրամ սահմանաչափով բնակավայրերի ցանկն ավելի ընդգրկուն է, քան սահմանամերձ բնակավայրերինը, այնուամենայնիվ հարկ է ընդգծել, որ այդ բնակավայրերում հիմնական խնդիրներն են աշխատաշուկայի սահմանափակությունները և կենսապայմանների որակը, ինչը էապես նվազեցնում է դրանց ընտրության հավանականությունը բռնի տեղահանված ընտանիքների կողմից:

**Հաշվի չեն առնվել նաև հատուկ կարիքներ ունեցող անձանց պահանջները:** Մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձանց անհրաժեշտ է լրացուցիչ սենյակ, որը իրենից ենթադրում է համապատասխան լրացուցիչ ֆինանսավորում: Հարկ է հավելել, որ **հաշվարկված չէ նաև գնաճի գործակիցը:**

Այստեղ ևս բանկերի մասնակցությունը ծրագրին վերջիններիս նախաձեռնությամբ է, սակայն ներկայում առկա են 5 ֆինանսական կազմակերպություններ (Էվոկաբանկ, Յունիբանկ, Ֆապթ Բանկ, Հայէկոնոմբանկ և Ամերիաբանկ), որոնք իրականացնում են վարկավորում վերոնշյալ ծրագրի շրջանակում: **Հիփոթեքային պայմանները նույնպես խնդրահարույց են:** Աջակցության չափը վարկի տոկոսագումարների սուբսիդավորման համար հաշվարկվում է 10 տարվա հաշվարկով ամսական անուիտետային մարման եղանակով հաշվարկված ամսական վճարման գումարներին համապատասխան և վերավարկավորող կազմակերպություններից ներգրավված միջոցների հաշվին տրամադրվող ծրագրային վարկերի դեպքում կազմում է 11%, իսկ բանկի սեփական ռեսուրսով վարկավորման դեպքում կազմում է՝

- 1) հաստատուն տոկոսադրույքով վարկավորման դեպքում մինչև 13%.
- 2) լողացող/հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքով վարկավորման դեպքում Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույք + 4% չափով՝ վարկի տրամադրման պահին:

Բացի այդ, **գործող ժամկետանց վարկային պարտավորություններ** ունեցող շահառուներին մերժվում է բնակտարածքի ձեռքբերման հավաստագրի տրամադրումը: Թեև ԱՍՀՆ դիրքորոշման համաձայն այս խնդիրը կարգավորվել է Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) հետ համագործակցաբար՝ ԿԲ համապատասխան ներքին իրավական կարգավորմամբ, գործնականում շահառուները շարունակում են բախվել այս խնդրին:

Միաժամանակ, **կառուցապատման հետ կապված սահմանափակումները** խոչընդոտում են շահառուների կողմից իրենց նախընտրած ձևով բնակտարածքի նախագծման հնարավորությունը՝ պարտադրելով ընտրություն կատարել բացառապես հաստատված տարբերակներից: Նմանապես, շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն միայն հաստատված կազմակերպությունների կողմից, և շահառուները չեն կարող ինքնուրույն իրականացնել վերանորոգման աշխատանքները՝ անկախ իրենց մասնագիտական որակավորումներից:

Ըստ այդմ, անհրաժեշտ է վերանայել աջակցության չափը՝ սահմանելով հաշվարկման նոր մեթոդաբանություն, որը հիմնված կլինի շուկայական միջին գների վրա և կներառի գնաճի գործակիցը: Անհրաժեշտ է հաշվի առնել ընտանիքի կազմը և սոցիալական կարգավիճակը՝ ստեղծելով լրացուցիչ պայմաններ հատուկ կարիքներ ունեցող անձանց (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց) համար, վերանայել բնակության վայրի ընտրության չափանիշները՝ դրանք դարձնելով առավել ճկուն և սահմանելով հավասար աջակցության չափ՝ անկախ բնակտարածքի գտնվելու վայրից, վերանայել հատկացվող գումարի կառուցապատման հետ կապված սահմանափակումները՝ հնարավորություն տալով շահառուներին մասնակցել բնակտարածքի նախագծման և վերանորոգման աշխատանքներին, ինչպես նաև ապահովել պետական միջամտություն տոկոսադրույքների իջեցման հարցում և վարկային պարտավորություններ ունեցող շահառուներին բնակտարածքի ձեռքբերման հավաստագրի տրամադրումը՝ ԿԲ ներքին իրավական ակտի համաձայն:

### **3. ԱՌՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

3.1. Միանվագ դրամական աջակցություն: ՀՀ կառավարության N 1675-Լ որոշում

3.1.1. Իրավական ակտի ամփոփ նկարագիրը:

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի «2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվածներին միանվագ դրամական սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1675-Լ որոշումը սահմանում է ԼՂ բռնի տեղահանվածների միանվագ դրամական աջակցության ծրագիրը:

Որոշման N 1 հավելվածի 1-ին կետի համաձայն՝ որոշմամբ հաստատված միջոցառման շահառու են հանդիսանում 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից ԼՂ-ի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված և **2023 թվականի սեպտեմբերի 24-ի ժամը 12:00-ից հետո ՀՀ ՆԳՆ ՄՔԾ կողմից հաշվառված բռնի տեղահանվածները:**

N 1 հավելվածի 1.1 կետը սահմանում է, որ որոշման իմաստով, **բռնի տեղահանված է համարվում** նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 27-ի «2022 թվականի դեկտեմբերի 12-ից Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով ՀՀ-ում ԼՂ բնակիչներին ժամանակավոր հյուրընկալող կացության կազմակերպման ծառայություններ իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ծախսերի փոխհատուցման սոցիալական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1287-Լ որոշման հավելվածի 7-րդ կետի համաձայն՝

- 2022 թվականի դեկտեմբերի 12-ից հետո Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից հաշվառված հյուրընկալվողը,
- 2022 թվականի դեկտեմբերի 12-ից Երևանի քաղաքապետարանի կողմից հաշվառված հյուրընկալվողը,
- ԼՂ-ի բժշկական կազմակերպությունների կողմից ուղեգրված և 2022 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ն ընկած որևէ ժամանակահատվածում ՀՀ-ում հիվանդանոցային ձևով (պայմաններում) բուժված (ներառյալ հիվանդանոցային ձևով ախտորոշիչ հետազոտությունները և վերականգնողական բուժումը) անձը,
- բուժված անձին ուղեկցող անձը, եթե միանվագ դրամական աջակցություն ստանալու համար նա ներկայացրել է որոշման N 2 հավելվածի 26-րդ կետով սահմանված դիմում

և նրա տվյալներն առկա են ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տվյալներում:

- ուսումնամարզական կամ այլ միջոցառումներին մասնակցելու նպատակով ԼՂ-ից ՀՀ տեղափոխված և 2022 թվականի դեկտեմբերի 12-ի դրությամբ ՀՀ-ում գտնվող՝ ԼՂ-ի բարձրագույն, միջին մասնագիտական և հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողը,
- 2022 թվականի դեկտեմբերի 12-ից հետո ԼՂ-ից ՀՀ ուսման նպատակով տեղափոխված անձը:

Համաձայն որոշման N 2 հավելվածի 26-րդ կետի՝ եթե շահառուի (այդ թվում՝ անչափահաս շահառուի) տվյալները չեն ներառվել վճարման ցուցակում, ապա միանվագ դրամական աջակցություն նշանակելու և վճարելու համար շահառուն (անչափահաս շահառուի դեպքում՝ նրա ծնողը) կարող էր գրավոր դիմել ծառայություն, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով՝ <https://e-request.am/> կայքէջի միջոցով՝ մինչև 2024 թվականի հունվարի 31-ը ներառյալ: Այս դեպքում անհրաժեշտ էր ներկայացնել, իսկ առցանց դիմումի դեպքում դիմումին կցել անձամբ ստորագրված դիմում, անձը հաստատող փաստաթղթի պատճենը և անհրաժեշտ փաստաթղթեր (էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ լուսապատճեններ), որոնք կհիմնավորեն անձի՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 1675-Լ որոշման N 1 հավելվածի 1-ին կետի համաձայն՝ բռնի տեղահանված լինելը կամ 1.1-ին կետի համաձայն՝ բռնի տեղահանված համարվելը:

Աջակցության չափը յուրաքանչյուր շահառուի համար կազմում է 100,000 դրամ:

### **3.1.2. Իրավական ակտի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:**

#### ***Ա) Շահառուների շրջանակի վերաբերյալ.***

Մույն որոշման շահառուների ցանկում ընդգրկվելու պարտադիր պայման է հանդիսանում՝

- 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից ԼՂ-ի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված և 2023 թվականի

սեպտեմբերի 24-ի ժամը 12:00-ից հետո ՀՀ ՆԳՆ ՄՔԾ կողմից հաշվառված լինելու հանգամանքը (բռնի տեղահանված անձինք)՝ Հավելվածի 1-ին կետ,

- Կամ՝ ՀՀ կառավարության 1287-Լ որոշման հավելվածի 7-րդ կետով սահմանված՝ բռնի տեղահանված համարվող անձանց խմբերից մեկին պատկանելը՝ Հավելվածի 1.1-ին կետ:

Սակայն, **շահառուների նշյալ շրջանակը ամբողջական չէ** և չի ներառում մի շարք խմբեր, որոնք փաստացի բռնի տեղահանված են, բայց չեն համապատասխանում սահմանված ֆորմալ չափանիշներին: Մասնավորապես՝

- ՀՀ ՆԳՆ ՄՔԾ բռնի տեղահանված անձանց ցուցակներում 2023 թվականի սեպտեմբերի 24-ի ժամը 12:00-ից հետո չընդգրկված, սակայն փաստացի բռնի տեղահանված անձինք:
- Որոշման՝ «բռնի տեղահանված համարվող անձանց» պայմաններին չհամապատասխանող, սակայն փաստացի բռնի տեղահանված համարվող անձինք:

Թեև կառավարության դիրքորոշման համաձայն՝ տարբեր պետական մարմինների միջոցով հավաքագրվել են անհրաժեշտ տվյալներ, և չհաշվառված բռնի տեղահանված անձանց համար իրականացվել են հաշվառման աշխատանքներ, սակայն գործնականում դեռևս արձանագրվում են դեպքեր, երբ անձինք դուրս են մնում աջակցության շրջանակից:

Օրինակ, երբ անձը ԱՀ-ից դուրս է եղել բուժման կամ այլ հարգելի պատճառով և չի կարողացել վերադառնալ շրջափակման պատճառով: Որոշմամբ բռնի տեղահանված համարվող անձանց խմբերից մեկում ընդգրկվելու համար պահանջվում է ԼՂ բժշկական հաստատությունների ուղեգրով 2022թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 19-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում հիվանդանոցային բուժում ստացած լինելը: Սակայն այս մոտեցումը հաշվի չի առնում ԿԽՄԿ-ի միջոցով տեղափոխված վիրավորներին կամ նման այլ դեպքերը:

Այս մասին բարձրաձայնել է նաև Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ ՄԻՊ)՝ փաստելով, որ Օպերատիվ շտաբի կողմից տրամադրված ցուցակները չեն արտացոլում իրական պատկերը, այն է՝ ամբողջությամբ չեն ընդգրկում 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո բռնի տեղահանված և ՀՀ-ում բնակություն հաստատած անձանց վերաբերյալ տվյալները:

**Շահառուների շրջանակի որոշման հետ կապված խնդիրներ են առաջանում նաև գործնական կիրառման ընթացքում:** Արձանագրվել են դեպքեր, երբ անձանց մերժվել է ՀՀ քաղաքացիություն և հաշվառում ունենալու հիմքով, թեև օրենսդրությամբ նման

սահմանափակում սահմանված չէ: Մա հակասում է ծրագրի հիմնական սկզբունքին, ըստ որի աջակցություն ստանալու հիմնական չափանիշը պետք է լինի բռնի տեղահանման փաստը:

**Այս սահմանափակումները հանգեցնում են նաև ՀՀ կառավարության N 1763-Լ որոշմամբ սահմանված աջակցությունից զրկվելուն, քանի որ այդ երկու որոշումները փոխկապակցված են, և կեցության և այլ ծախսերը հոգալու համար տրամադրվող աջակցությունից օգտվելու համար անձը պետք է հանդիսանա N 1675-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում միանվագ դրամական սոցիալական աջակցության շահառու:**

Արդյունքում, նշյալ խմբի անձինք ոչ մի աջակցության ծրագրից չեն օգտվում, ինչը հանգեցնում է միևնույն կատեգորիայի անձանց նկատմամբ տարբերակված մոտեցման: Այս մոտեցումը ոչ միայն բարոյական տեսանկյունից է խնդրահարույց, այլև իրավական առումով հակասում է հավասար վերաբերմունքի և սոցիալական արդարության սկզբունքներին: Աջակցության բացակայությունը բռնի տեղահանված անձանց համար առաջացնում է մի շարք լուրջ հետևանքներ, ներառյալ լրացուցիչ ֆինանսական դժվարություններ, պարտքերի կուտակում, հոգեբանական սթրես, և էականորեն խոչընդոտում է նրանց վերաինտեգրման գործընթացը:

Ելնելով վերոնշյալից, անհրաժեշտ է վերանայել շահառուների ճանաչման չափանիշները՝ առաջնորդվելով ոչ թե ձևական պահանջներով, այլ անձանց փաստացի կարգավիճակով և կարիքներով: Ըստ այդմ, անհրաժեշտ է փոփոխություններ կատարել N 1675-Լ որոշման N 1 Հավելվածի 1-ին և 1.1-ին կետերում և ընդլայնել բռնի տեղահանված և բռնի տեղահանված համարվող անձանց շրջանակը: Մասնավորապես, երկրորդ կատեգորիայի շահառուների համար անհրաժեշտ է սահմանել հստակ չափորոշիչներ, այդ թվում՝ ԱՀ տարածքից դուրս գալու և շրջափակման սկսման միջև ընկած ժամանակահատվածի առավելագույն սահմանաչափ: Նշված ժամանակային շեմը թույլ կտա օբյեկտիվորեն գնահատել անձի՝ ԱՀ վերադառնալու մտադրությունը և տարանջատել ժամանակավոր բացակայությունը մշտական տեղափոխումից: Այս մոտեցումը կապահովի պետական աջակցության միջոցների թիրախային և արդյունավետ բաշխում՝ նվազեցնելով հնարավոր չարաշահումների ռիսկը:

***F) Ծրագրի ժամկետի վերաբերյալ.***

Որոշմամբ սահմանված է, որ շահառու կարող են լինել միայն այն անձինք, ովքեր դիմում են ներկայացրել մինչև 2024թ. հունվարի 31-ը: Այս ժամկետային սահմանափակման արդյունքում բռնի տեղահանված անձինք, ովքեր համապատասխանում են Կարգով նախատեսված պահանջներին, սակայն տարբեր օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված նշված ժամկետում դիմում չեն ներկայացրել, գրկվում են միանվագ դրամական աջակցություն ստանալու հնարավորությունից:

ԱՍՀՆ դիրքորոշման համաձայն, 2024թ. հունվարի 31-ը համարվում է ողջամիտ ժամկետ իրավունքն իրացնելու համար, քանի որ շահառուների մեծամասնությանը դրամական աջակցությունը վճարվել է Միջոցառման իրականացման առաջին ամիսներին: Այնուամենայնիվ, այս մոտեցումը հաշվի չի առնում բռնի տեղահանված անձանց խոցելի կարգավիճակը, տեղեկատվական անհավասարությունը և տարբեր անձանց՝ ծրագրերի մասին իրազեկվածության տարբեր մակարդակները:

Հատկապես մտահոգիչ է այն հանգամանքը, որ միանվագ դրամական աջակցության շահառու չճանաչվելը բացառում է նաև այլ աջակցության ծրագրերից օգտվելու հնարավորությունը՝ հաշվի առնելով N 1675-Լ և N 1763-Լ որոշումների փոխկապակցվածությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկվում է որոշման մեջ կատարել փոփոխություն և ուժը կորցրած ճանաչել միանվագ դրամական աջակցության համար դիմում ներկայացնելու ժամկետի սահմանափակումը: Նշված փոփոխությունը կդիտարկվի որպես բարելավող նորմ, և այն անձինք, ովքեր սահմանված ժամկետում դիմում չեն ներկայացրել, հնարավորություն կունենան ներկա պահին այն ներկայացնել և ներառվել շահառուների ցանկում:

Թեև Միջոցառումը նախատեսված էր որպես միանվագ բնույթի ծրագիր, սակայն հաշվի առնելով դրա նշանակությունը և դերը բռնի տեղահանված անձանց աջակցության համակարգում, ժամկետային սահմանափակման վերացումը կնպաստի սոցիալական արդարության ապահովմանը և կօգնի ոչ թե ձևական, այլ բովանդակային մոտեցմամբ լուծել շահառուների խնդիրները:

**3.2. Կեցության ծախսեր. ՀՀ կառավարության N 1763-Լ որոշում և N 1833-Լ որոշում**

**3.2.1. Իրավական ակտերի ամփոփ նկարագիրը:**

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի «Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1763-Լ որոշումը վերաբերում է ԼՂ-ից տեղահանվածներին կեցության և այլ ծախսերի համար սոցիալական աջակցության տրամադրմանը:

Ծրագրի շահառուներ են այն անձինք, ովքեր ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 1675-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում միանվագ դրամական սոցիալական աջակցության շահառու են, և ովքեր 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո տեղահանվել են և 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ գտնվել են ՀՀ-ում: Նշյալից բխում է, որ սույն ծրագրի շահառու են հանդիսանում՝

- 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո տեղահանվածների մասով՝ Օպերատիվ շտաբի (այսուհետ՝ ՕՇ) տրամադրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ ՀՀ-ում գտնվող ԼՂ-ի բնակիչ հանդիսացող անձանց ցուցակներում ներառված անձինք,
- 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեյջանի կողմից ԼՂ-ի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվածների մասով՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 1675-Լ որոշման N 1 հավելվածով հաստատված միջոցառման շահառուների ցուցակներում ներառված անձինք, այն է՝
  - Հավելվածի 1-ին կետով՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեյջանի կողմից ԼՂ-ի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված և 2023 թվականի սեպտեմբերի 24-ի ժամը 12:00-ից հետո ՀՀ ՆԳՆ ՄՔԾ կողմից հաշվառված բռնի տեղահանվածները:
  - Հավելվածի 1.1-ին կետով՝ բռնի տեղահանված համարվող անձինք՝ ՀՀ կառավարության 1287-Լ որոշման հավելվածի 7-րդ կետի համաձայն:

Ծրագրի շահառու չեն կարող հանդիսանալ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում, հյուրանոցներում կամ հյուրատներում ժամանակավոր բնակվող անձինք և ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակում 2024 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հավաստագիր ստացած անձինք:



ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 21-ի «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված առանձին խմբերի անձանց կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N 1833-Լ որոշմամբ՝ 1763-Լ որոշմանն առնչվող հունվարի 1-ից ուժի մեջ մտնող փոփոխություններով լրացվել է ծրագրի շահառու չհանդիսացող անձանց շրջանակը՝ ներառելով ՀՀ-ում սեփականության (այդ թվում՝ համատեղ կամ բաժնային) իրավունքով իրեն կամ իր ընտանիքի անդամներին (ամուսին, մինչև 18 տարեկան երեխայի ծնող) պատկանող բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունեցող անձանց, բացառությամբ երբ սվյալ անձը՝ (ա) ՀՀ-ում ունի բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակվելու համար նախատեսված միայն մեկ անշարժ գույք, որի բաժնեմասին (ընդհանուր համատեղ սեփականության դեպքում համասեփականատերերի բաժնեմասերը դիտարկվում են հավասար չափերով) համապատասխան մակերեսը փոքր է 20 քառակուսի մետրից, և (բ) ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի N 710-Լ որոշման շրջանակներում բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման կամ անհատական բնակելի տան կառուցման հավաստագիրն իրացրած անձ է:

Աջակցության չափն ի սկզբանե կազմում էր՝

- 50000 դրամ ամսական՝ ՀՀ-ում սեփականության իրավունքով բնակելի անշարժ գույք չունեցող շահառուների համար:
- 10000 դրամ ամսական՝ ՀՀ-ում սեփականության իրավունքով բնակելի անշարժ գույք ունեցող շահառուների համար:

ՀՀ կառավարության N 1833-Լ որոշմամբ սահմանված վերոնշյալ փոփոխությունների արդյունքում ՀՀ-ում սեփականության (այդ թվում՝ համատեղ կամ բաժնային) իրավունքով իրեն պատկանող բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունեցող անձինք չեն համարվելու սոցիալական աջակցության շահառու և հետևաբար չեն ստանալու աջակցություն 10.000 ՀՀ դրամի չափով:

Աջակցությունն ի սկզբանե նախատեսվում էր տրամադրել 2023 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ, սակայն N 1833-Լ որոշմամբ սահմանված սոցիալական աջակցության տրամադրման ժամկետը երկարացվել է ևս 3 ամսով՝

մինչև 2025 թվականի մարտ ամիսը ներառյալ: Վճարումներն իրականացվում են անկանխիկ եղանակով՝ շահառուի բանկային հաշվին փոխանցման միջոցով: Դիմումների ընդունման վերջնաժամկետն էր 2024 թվականի դեկտեմբերի 15-ը, որը ևս երկարացվել է ևս 3 ամսով՝ մինչև 2025 թվականի մարտի 15-ը:

ՀՀ կառավարության N 1833-Լ որոշմամբ սահմանված «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված առանձին խմբերի անձանց կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջոցառման» շահառուներ են հանդիսանում

- 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության սահմանափակման խորը կամ ծանր աստիճան ունեցող անձինք.
- 63 և ավելի տարեկան անձինք.
- կերակրողին կորցնելու դեպքում նպաստ կամ կենսաթոշակ ստացող անձինք.
- հանրակրթական ուսումնական հաստատություններում կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում սովորող 18 տարին լրացած անձինք և մինչև 18 տարեկան երեխաները:

Վերջիններիս նկատմամբ ևս գործում է N 1675-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում միանվագ դրամական սոցիալական աջակցության շահառուների կամ ՕՇ-ի տրամադրած ցուցակներում տվյալները ներառված լինելու պահանջը, ինչպես նաև շահառու չհանդիսացող անձանց շրջանակի բացառությունները՝ տարբերությամբ, որ հստակեցվել է միայն «պետական աջակցությամբ» հյուրանոցներում կամ հյուրատներում ժամանակավոր բնակվող անձինք:

Սոցիալական աջակցություն նշյալ խմբերին նախատեսվում է տրամադրել 2025 թվականի ապրիլից մինչև դեկտեմբեր ամիսը ներառյալ, իսկ աջակցության ամսական չափը յուրաքանչյուր շահառուի համար կազմում է՝

- 2025 թվականի ապրիլ ամսվանից մինչև հունիս ամիսը ներառյալ՝ 40000 դրամ.
- 2025 թվականի հուլիս ամսվանից մինչև դեկտեմբեր ամիսը ներառյալ՝ 30000 դրամ:

### **3.2.2. Իրավական ակտերի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:**

***Ա) Շահառուների շրջանակի վերաբերյալ.***

Որոշումներով նախատեսված շահառուների ցուցակների տվյալների որոշման մեխանիզմները խնդրահարույց են և չեն ներառում՝

- ՕՇ ցուցակներում չընդգրկված, սակայն փաստացի 2020թ. սեպտեմբերին տեղահանված և 2023թ. սեպտեմբերի 19-ի դրությամբ ՀՀ-ում գտնված անձանց.
- ՀՀ կառավարության N 1675-Լ որոշման Հավելվածի 1-ին կետով՝ ՀՀ ՆԳՆ ՄՔԾ բռնի տեղահանված անձանց ցուցակներում 2023 թվականի սեպտեմբերի 24-ի ժամը 12:00-ից հետո չընդգրկված, սակայն փաստացի բռնի տեղահանված անձանց և Հավելվածի 1.1 կետով «բռնի տեղահանված համարվող անձանց» պայմաններին չհամապատասխանող, սակայն փաստացի բռնի տեղահանված համարվող անձանց.
- ՀՀ կառավարության N 169-Լ որոշման՝ հուլիսի 1-ի դրությամբ հավաստագիր ստացած անձանց:

Բացի այդ, ՀՀ կառավարության N 1833-Լ որոշմամբ նախատեսված ԼԴ-ից բռնի տեղահանված առանձին խմբերի անձանց ցանկը սահմանափակ է և չի ներառում մի շարք այլ խոցելի խմբերի:

*i. ՕՇ ցուցակներում չընդգրկված, սակայն փաստացի 2020թ. սեպտեմբերին տեղահանված և 2023թ. սեպտեմբերի 19-ի դրությամբ ՀՀ-ում գտնված անձանց չներառելը.*

Ծրագրերի իրականացման ընթացքում առանձնահատուկ խնդիր է առաջացել ՕՇ ցուցակներում չընդգրկված անձանց հետ կապված: Կառավարության դիրքորոշման համաձայն՝ նախարարությունը առաջնորդվում է միայն «առկա, հասանելի և ստուգելի շտեմարանների տվյալներով» և «փոփոխություններ ու լրացումներ կատարելու լիազորություններ չունի» ՕՇ ցուցակներում: Այս մոտեցումը, սակայն, անտեսում է այն անձանց իրավիճակը, ովքեր փաստացի տեղահանվել են 2020թ. սեպտեմբերին և 2023թ. սեպտեմբերի 19-ի դրությամբ գտնվել են ՀՀ-ում, բայց տարբեր պատճառներով չեն ընդգրկվել ՕՇ պաշտոնական ցուցակներում:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ անձանց մեծ մասը կարող է ներկայացնել հավաստի ապացույցներ իրենց տեղահանված լինելու և ՀՀ-ում գտնվելու

վերաբերյալ, սակայն զուտ տեխնիկական պատճառներով դուրս են մնում աջակցության շրջանակից:

Հատկանշական է, որ ՀՀ կառավարության N 1675-Լ որոշման շրջանակում արդեն իսկ նախատեսված է մեխանիզմ, որը թույլ է տալիս ցուցակներում չընդգրկված անձանց ներկայացնել ապացույցներ և ճանաչվել որպես շահառու: Այս առումով առկա է տարբերակված մոտեցում, որը հակասում է հավասարության և արդարության սկզբունքներին:

Անհրաժեշտ է վերանայել այս մոտեցումը և ստեղծել մեխանիզմներ, որոնք թույլ կտան դիտարկել նաև ՕՇ ցուցակներում չընդգրկված անձանց դիմումները՝ հիմք ընդունելով նրանց կողմից ներկայացվող փաստական ապացույցները:

*ii. ՀՀ կառավարության N 1675-Լ որոշման շահառուների ցուցակներում չընդգրկված անձանց չներառելը.*

ԻՀԱ-ն առաջարկել է համակարգային լուծում՝ փոփոխելով հենց 1763-Լ որոշման շահառուների սահմանումը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ՝ ԱՍՀՆ) ներկայացված գրությամբ առաջարկվել է կիրառել հետևյալ սահմանումը՝

*«ՀՀ կառավարության N 1763-Լ որոշմամբ հաստատված Հավելված N 1-ի 1-ին կետի համաձայն՝ «Սույն միջոցառման նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 1675-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում միանվագ դրամական սոցիալական աջակցության շահառու հանդիսացող և (կամ) 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո տեղահանված, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում փաստացի բնակվող (մինչև շրջափակումը Արցախի Հանրապետությունից դուրս գտնվող) ու 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ հանդիսացող անձանց (այսուհետ՝ շահառուներ):»* Տվյալ կատեգորիայի անձանց համար առաջարկվել է սահմանել հստակ չափորոշիչներ, մասնավորապես՝ ԱՀ տարածքից դուրս գալու և շրջափակման սկսման միջև ընկած ժամանակահատվածի առավելագույն սահմանաչափ:

Ի պատասխան ԻՀԱ գրության, ՀՀ ԱՍՀՆ-ն ԻՀԱ-ի կողմից առաջարկվող սահմանման վերաբերյալ որևէ դիրքորոշում չի հայտնել: Այս կապակցությամբ, 08.05.2024 թ.-ին ԻՀԱ-ի

կողմից ՀՀ վարչապետին ևս ներկայացվել է գրություն, որին ի պատասխան նշվել է, որ սահմանված կարգավորումներն առավելագույն չափով հնարավորություն են տալիս մինչև շրջափակումը, որոշակի հանգամանքներով պայմանավորված, ԼՂ սահմանը հատած և ՀՀ-ում փաստացի գտնվող անձանց միանվագ դրամական սոցիալական աջակցության, հետևաբար, նաև կեցության և այլ ծախսերը հոգալու համար տրամադրվող սոցիալական աջակցության միջոցառման շահառու հանդիսանալու համար: Միառժամանակ, նշվում է, որ ԼՂ-ից բռնի տեղահանվածներին սոցիալական աջակցության տրամադրման համատեքստում սահմանված շահառուների ընտրության չափորոշիչների՝ ի նպաստ շահառուների, նոր փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակահարմարությունն ու հնարավորությունը նախարարությունում քննարկման փուլում է:

Ելնելով վերոգրյալից, ԻՀԱ-ն շարունակում է պնդել իր առաջարկած ձևակերպումը N 1763-Լ որոշման կապակցությամբ, որը կիրառելի է N 1833-Լ որոշման նկատմամբ՝ առանձին անձանց մասով: Վերջինս նպատակ ունի ընդլայնել բռնի տեղահանված համարվող անձանց շահառուների շրջանակը՝ ներառելով նաև մինչև շրջափակումը ԱՀ-ից դուրս գտնված անձանց, ովքեր չէին կարող կանխատեսել վերադարձի անհնարինությունը, սակայն ներառված չեն N 1675-Լ որոշման շահառուների ցուցակներում: Այս մոտեցումը կապահովի աջակցության առավել արդարացի և ներառական բաշխում՝ հաշվի առնելով բոլոր փաստացի տեղահանված անձանց իրական կարիքները:

*iii. ՀՀ կառավարության N 169-Լ որոշման շահառուներին չներառելը/մասնակի ներառելը.*

ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 28-ի N 447-Լ որոշմամբ՝ փոփոխություններ կատարվեցին ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-Լ որոշման մեջ, որոնց համաձայն ծրագրի շահառու չեն կարող հանդիսանալ ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշման շահառուները:

Այս փոփոխությունները հանգեցրեցին բռնի տեղահանված անձանց լայն շրջանակի բողոքին, քանի որ վերջիններս 2024 թվականի ապրիլ ամսվանից դուրս մնացին կեցության ծախսերի փոխհատուցման շահառուների ցանկից:

Խնդիրն առնչվում էր շահառուների երկու հիմնական խմբի:

Առաջին խմբում էին N 169-Լ որոշմամբ նախատեսված պետական աջակցության ծրագրի շահառու հանդիսացող անձինք, ովքեր չէին դիմել ծրագրին և չունեին համապատասխան հավաստագիր:

Երկրորդ խմբում էին արդեն իսկ շահառու ճանաչված անձինք, ովքեր թեև ստացել են հավաստագիր, սակայն օբյեկտիվ պատճառներով հնարավորություն չեն ունեցել ծրագրի շրջանակներում ձեռք բերել բնակտարածք:

Հիշեցնենք, որ նշյալը ներառում է ԱՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 21-ի N 1394-Ն որոշման շրջանակներում ԱՀ տարածքում բնակտարածք ձեռք բերած անձանց, ովքեր 2023 թվականի սեպտեմբերի 19-ի պատերազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանության արդյունքում ավտոմատ կերպով դիտարկվում են որպես N 169-Լ որոշման շահառուներ:

Այս կապակցությամբ ԻՀԱ-ի կողմից 30.07.2024թ.-ին ՀՀ ԱՍՀՆ ներկայացվել է գրություն, որում բարձրաձայնվել են վերոնշյալ խնդիրները: Նախարարության պատասխան գրությամբ նշվեց, որ վերոնշյալ մասով որոշումը վերանայելու հնարավորության հարցն ընդունելի է և նախարարությունում քննարկման փուլում է:

Արդյունքում, ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 10-ի N 1608-Լ որոշմամբ փոփոխություններ կատարվեցին ՀՀ կառավարության N 1763-Լ որոշման մեջ, որով N 1763-Լ որոշման շահառու չհանդիսացող՝ N 169-Լ որոշման «շահառու հանդիսացող» անձանց շրջանակը փոխարինվեցին «2024 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հավաստագիր ստացած» անձանց շրջանակով: Այսինքն՝ եթե նախկինում N 1763-Լ որոշման շահառու չէին կարող լինել N 169-Լ որոշման բոլոր շահառուները, ապա այժմ N 1763-Լ որոշման շահառու չեն կարող լինել միայն այն անձինք, ովքեր մինչև 2024թ. հուլիսի 1-ը ստացել են N 169-Լ որոշման շրջանակում տրամադրվող հավաստագիրը:

Միննույն ժամանակ, նշյալը միայն մասնակի լուծեց բարձրաձայնված խնդիրը, քանի որ արդեն իսկ շահառու ճանաչված անձանց շրջանակը, ովքեր թեև բռնի տեղահանվել են Արցախից, հուլիսի 1-ի դրությամբ ստացել են հավաստագիր, սակայն օբյեկտիվ պատճառներով հնարավորություն չեն ունեցել ծրագրի շրջանակներում ձեռք բերել սեփականության իրավունքով բնակտարածք, ապրում են վարձակալական հիմունքներով, 2024 թվականի ապրիլ ամսից զրկվել են բռնի տեղահանված անձանց կեցության և այլ ծախսերը հոգալու համար տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրից օգուվելու հնարավորությունից:

Հասկանալի է, որ նշյալ որոշմամբ սահմանված է, որ ՀՀ կառավարության N710-Լ որոշման շրջանակներում ոչ թե բնակելի տարածք ձեռք բերելու հավաստագիր ստանալն է հանդիսանում սոցիալական աջակցության ծրագրից դուրս մնալու նախապայման, այլ՝ իրացնելը: Ստացվում է սույն որոշմամբ, N169-Լ որոշման դեպքում խիստ մոտեցում է տրվում, իսկ 710-Լ որոշման դեպքում ավելի դրական ու ի օգուտ քաղաքացիների շահերի, երբ անգամ հավաստագիր իրացրած անձինք կպահպանեն իրենց սոցիալական աջակցության իրավունքը:

Մեր կարծիքով, նշված խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություններ՝ նշելով ժամանակատված, որի ընթացքում անձինք հնարավորություն կունենան ստանալ կեցության և այլ ծախսերը հոգալու համար տրամադրվող սոցիալական աջակցության գումարները և սահմանված ժամկետում N 169-Լ որոշմամբ ստացված հավաստագիրը չիրացնելու դեպքում կզրկվեն աջակցությունից: Այս խնդիրը վերաբերում է նաև N 1833-Լ որոշման շահառուների շրջանակին:

*iv. Միայն որոշակի խմբերի ՀՀ կառավարության N 1833-Լ որոշման շահառուների ցանկում ներառելը*

ՀՀ կառավարության N 1833-Լ որոշմամբ աջակցության մեխանիզմը փոփոխվելու է, ըստ որի 2025 թվականի ապրիլից աջակցությունը տրամադրվելու է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց միայն որոշակի խմբերի՝ մինչև 2025թ. դեկտեմբեր ամիսը ներառյալ: Նման իրավիճակում տեղահանվածների զգալի մասը դուրս է մնալու սոցիալական աջակցության շահառուների շրջանակից, ինչի հետևանքով սոցիալական ծանր վիճակ է առաջանալու՝ հաշվի առնելով անշարժ գույքի վարձակալության շուկայում ձևավորված գները, և բռնի տեղահանված անձանց ընդհանուր թվի շուրջ մեկ երրորդի կողմից աշխատանք չունենալը կամ ձեռնարկատիկարական գործունեություն չիրականացնելը:

Ծրագրով նախատեսված ԼՂ-ից բռնի տեղահանված առանձին խմբերի անձանց ցանկը խիստ սահմանափակ է և չի ներառում մի շարք խոցելի խմբերի ներկայացուցիչների, այդ թվում՝

- 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող կամ աշխատելու հնարավորություն չունեցող՝ ֆունկցիոնալության սահմանափակման խորը կամ ծանր աստիճան ունեցող անձանց խնամողները,

- 55 տարեկանից բարձր անձինք (հաշվի առնելով վերջիններիս՝ աշխատանքային շուկայում ոչ մրցունակ լինելու հանգամանքը),
- 63 տարեկանը չգերազանցող որդեկորույս ծնողները,
- Անչափահաս երեխաներ խնամող սոցիալապես անապահով միայնակ ծնողները:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, առաջարկվում է N 1833-Լ որոշմամբ նախատեսված սոցիալական աջակցության ծրագիրը շարունակել նախկին սկզբունքներով՝ պահպանելով աջակցության ամբողջ ծավալը և շահառուների շրջանակը: Այս մոտեցումը պետք է գործի մինչև N 1763-Լ ծրագրի բոլոր շահառուների համար մշտական բնակարանային լուծումներ գտնելը՝ ապահովելով աջակցության անընդհատությունը և ուղղակիորեն կապելով ծրագրի ավարտը շահառուների բնակարանային ապահովման հետ, այլ ոչ թե նախասահմանված ժամկետի հետ:

Եթե առաջին տարբերակը սկզբունքայնորեն անընդունելի է համարվում, առաջարկվում է ընդլայնել N 1833-Լ որոշման շահառուների կազմը՝ ներառելով վերոնշյալ խոցելի խմբերին պատկանող անձանց, որոնք առանց պետական աջակցության գտնվում են սոցիալ-տնտեսական անապահով վիճակում: Այս այլընտրանքային տարբերակը, թեև ամբողջությամբ չի լուծում աջակցության երկարաժամկետ շարունակականության խնդիրը, սակայն առնվազն կնվազեցնի աջակցության դադարեցման բացասական հետևանքները առավել խոցելի խմբերի համար և կապահովի նրանց տարրական կենսապայմանները:

***F) Աջակցության չափի սահմանման և վճարման մեխանիզմների վերաբերյալ.***

Աջակցության չափերի հետ կապված առկա են մի շարք խնդրահարույց անհամապատասխանություններ:

ՀՀ կառավարության N 1763-Լ որոշման մեջ առկա է հակասություն Հավելված N1-ի 4-րդ կետի և Հավելված N2-ի 22-րդ կետերի միջև: Թեև աջակցության ամսական չափը պետք է կազմի 50,000 դրամ այն անձանց համար, ովքեր անձամբ չունեն սեփականության իրավունքով բնակտարածք, փաստացի նրանց վճարվում է 10,000 դրամ, եթե նրանց ամուսնու կամ անչափահաս երեխաների անվամբ գրանցված է սեփականության իրավունք: Այս խնդրի վերաբերյալ ներկայացված անհատական բողոքների միայն կեսն է բավարարվել:



Լուրջ **անարդարություն է առաջանում նաև բնակտարածքի չափերի հաշվարկման առկա մեխանիզմի պատճառով**: N 1763-Լ որոշման համաձայն, եթե անձը համատեղ կամ բաժնային սեփականության իրավունքով ունի 20 քմ-ից պակաս բնակտարածք, նա ստանում է լրիվ աջակցություն (50,000 դրամ), մինչդեռ եթե անձը միակ սեփականատերն է 20 քառակուսի մետրից ավելի բնակտարածքի, նա ստանում է միայն մասնակի աջակցություն (10,000 դրամ)՝ անկախ իր ընտանիքի անդամների թվից: N 1833-Լ որոշման նախատեսված կարգավորմամբ երկրորդ խմբի անձինք առհասարակ զրկվում են սոցիալական աջակցություն ստանալու իրավունքից: Սա առաջացնում է անհավասար վերաբերմունք, քանի որ չի հաշվի առնվում մեկ շնչի հաշվով բնակելի մակերեսը, այլ միայն սեփականության ձևը և ընդհանուր մակերեսը: Այս անարդարությունը հատկապես ակնհայտ է դառնում, երբ համեմատում ենք, օրինակ, երկու հոգուց բաղկացած ընտանիքին պատկանող 20 քառակուսի մետրից պակաս բնակտարածքը յոթ հոգուց բաղկացած ընտանիքին պատկանող 40 քառակուսի մետր բնակտարածքի հետ: Նշված խնդրին անդրադարձ է կատարել նաև ՄԻՊ-ը 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան [հաղորդման](#) շրջանակում:

Լրացուցիչ խնդիր է հանդիսանում նաև **աջակցության գումարների վերահաշվարկման և վճարումների իրականացման ձգձգումը**: Թեև որոշման բողոքարկման ընթացակարգի շրջանակում դիմումները Միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ ՄՄԾ) պետք է ուսումնասիրի առավելագույնը 15 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն գործնականում ՄՄԾ-ն հաճախ ամիսներ շարունակ չի կայացնում վերջնական որոշում՝ պարբերաբար տեղեկացնելով, որ հարցը «լրացուցիչ ուսումնասիրվում է»: Սա հակասում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին և զգալի վնաս է հասցնում բռնի տեղահանված անձանց, քանի որ այս աջակցությունը կենսական նշանակություն ունի նրանց հիմնական կարիքների բավարարման, սոցիալական ինտեգրման և հոգեբանական վերականգնման համար:

Առաջարկվում է հստակեցնել և ներդաշնակեցնել N 1763-Լ և N 1833-Լ որոշումների հավելվածներում առկա դրույթները՝ բացառելով հակասությունները, վերանայել բնակտարածքի հաշվարկման ներկա մեխանիզմը՝ աջակցության չափը/շահառուների շջանակը որոշելիս հիմք ընդունելով մեկ շնչի հաշվով բնակելի մակերեսը, ոչ թե սեփականության ձևը կամ ընդհանուր մակերեսը, ինչպես նաև ապահովել ՄՄԾ-ի կողմից

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետների խստագույն պահպանումը և մշտադիտարկումը՝ բացառելով աջակցության գումարների վճարման անհիմն ձգձգումները:

### **3.3. Առաջնային սպառողական ծախսեր. ՀՀ կառավարության N 1957-Լ որոշում**

#### **3.3.1. Իրավական ակտի ամփոփ նկարագիրը:**

ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին առաջնային սպառողական ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1957-Լ որոշումը վերաբերում է ԼՂ-ից տեղահանվածներին առաջնային սպառողական ծախսերի համար սոցիալական աջակցության տրամադրմանը:

Ծրագրի շահառուներ են ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 1675-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում միանվագ դրամական սոցիալական աջակցության շահառու հանդիսացող անձինք: Ծրագրի շահառու չեն կարող հանդիսանալ 2023 թվականի նոյեմբերի 15-ի դրությամբ հյուրանոցներում կամ հյուրատներում ժամանակավոր բնակվող անձինք:

Աջակցությունը տրամադրվում է երկամսյա դրամական աջակցության ձևով՝ 2023 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար: Աջակցության չափը կազմում է ամսական 50,000 դրամ:

Դիմումների ընդունումն իրականացվում է 2023 թվականի նոյեմբերի 17-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ը ներառյալ: Դիմումները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով՝ ծառայության socservice.am կայքէջի միջոցով: Մինչև 18 տարեկան երեխայի համար դիմում ներկայացնում է ծնողը, խնամակալը կամ հոգաբարձուն: Շահառուի բանկային հաշիվներում 2023 թվականի հոկտեմբերի 2-ի դրությամբ առկա միջոցները չպետք է գերազանցեն 2,000,000 դրամը (բացառությամբ Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամից հատուցում ստացող շահառուների):

Մերժված դիմումները կարող են բողոքարկվել մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը:

### 3.3.2. Իրավական ակտի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:

ՀՀ կառավարության N 1957-Լ որոշմամբ առաջնային սպառողական ծախսերի համար սոցիալական աջակցությունը նախատեսված է միայն 2023 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար, իսկ դիմումների ընդունման վերջնաժամկետ է սահմանվել 2024 թվականի մայիսի 31-ը: Այստեղ առկա են երկու խնդիրներ:

Առաջին՝ չնայած բռնի տեղահանված անձանց առաջնային սպառողական ծախսերի հոգալու կարիքը շարունակում է մնալ արդիական, աջակցությունը սահմանափակվել է ընդամենը երկու ամսով: Առաջնային սպառողական ծախսերի հոգալու համար սոցիալական աջակցությունը պետք է ունենա շարունակական բնույթ՝ հաշվի առնելով բռնի տեղահանված անձանց սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովման անհրաժեշտությունը:

Երկրորդ՝ դիմումների ընդունման ժամկետի սահմանափակումը կարող է խոչընդոտել իրական կարիք ունեցող անձանց՝ աջակցությունից օգտվելու հնարավորությանը, եթե նրանք օբյեկտիվ պատճառներով չկարողանան սահմանված ժամկետում դիմել: Հատկապես երբ խոսքը վերաբերում է առաջնային սպառողական ծախսերին, նման սահմանափակումը կարող է լրացուցիչ դժվարություններ ստեղծել բռնի տեղահանված անձանց համար:

ԱՍՀՆ դիրքորոշումն ընդունում է, որ որոշումը միտված է եղել ԼՂ-ից բռնի տեղահանվածներին առաջնային սպառողական ծախսերը հոգալու համար ժամանակավոր սոցիալական աջակցության տրամադրմանը, սակայն ընդգծում է, որ սոցիալական աջակցության միջոցառումները չեն կարող լուծել սոցիալական պաշտպանության համակարգի բոլոր խնդիրները, իսկ զբաղվածության և անապահովության հարցերը պետք է լուծվեն գործող ծրագրերի բարելավման միջոցով:

Հաշվի առնելով ԱՍՀՆ դիրքորոշումը և շահառուների շարունակական կարիքները, առաջարկվում է երկարաձգել աջակցության տրամադրման ժամկետը առնվազն մինչև 2025 թվականի հունիսի 30-ը՝ մինևույն ժամանակ կատարելով համալիր կարիքների պարբերական գնահատում, ինչպես օրինակ ԱՍՀՆ-ՅՈՒՆԻՍԵՖ համագործակցության շրջանակում արդեն իսկ իրականացվող «Էլեկտրոնային դրամապանակ» ծրագիրն է: Կարիքների գնահատման արդյունքում ներդնել փուլային անցման մոդել, որով աջակցությունը աստիճանաբար կտրանսֆորմացվի երկարաժամկետ լուծումների՝ հաշվի առնելով զբաղվածության և

ինքնագրադավաճության խթանման ծրագրերը: Սույն առաջարկները նպատակ ունեն ոչ թե պարզապես երկարաձգել աջակցության տրամադրման ժամկետը, այլ ստեղծել կայուն մեխանիզմ, որը կապահովի բռնի տեղահանված անձանց արժանապատիվ աղապտացիան և ինտեգրացիան՝ հաշվի առնելով ԱՍՀՆ-ի կողմից արդեն իսկ մեկնարկած ծրագրերը և առկա մեխանիզմները:

### **3.4. «Պետական կենսաթոշակների մասին» օրենք և ՀՀ կառավարության N 665-Ն որոշում**

#### **3.4.1. Իրավական ակտի ամփոփ նկարագիրը:**

Կենսաթոշակների նշանակմանը, վճարմանը, կենսաթոշակի իրավունքն իրացնելու համար աշխատանքային ստաժում հաշվառվող ժամանակահատվածները հաշվարկելու առանձնահատկություններին, կարգին ու պայմաններին առնչվող հարաբերությունները առնչվող հարաբերությունները կարգավորվում են «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի ««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն որոշմամբ:

Այսպես, Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 63 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 1.1-ին մասերի համաձայն՝ մինչև 1992 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ Կառավարության սահմանած այլ փաստաթուղթ:

1992 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթը՝

- 1) աշխատանքային գրքույկն է կամ Կառավարության սահմանած այլ փաստաթուղթ և
- 2) սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 2013 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածի աշխատանքային ստաժը հաստատվում է օրենքով սահմանված տեղեկատվական շտեմարան ներառված տվյալների հիման վրա:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող՝ ՀՀ կառավարության սահմանած այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով:

Կենսաթոշակի իրավունքը տվող պայմանները սահմանված են Օրենքով և միատեսակ կիրառություն ունեն ՀՀ-ում կենսաթոշակի իրավունք իրացնող բոլոր անձանց համար: Օրենսդրական միևնույն հիմքով հաստատվում է նաև աշխատանքային ստաժները: Այսինքն, ԼՂ-ում նշանակված կենսաթոշակները ոչ թե շարունակվում են վճարվել ՀՀ-ում, այլ նշանակվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ կառավարության N 665-Ն որոշման N 1 հավելվածում կատարված լրացումների (փոփոխությունների) արդյունքներով անդրադարձ է կատարվել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակի իրավունքն իրացնելիս աշխատանքային ստաժը հավաստող փաստաթղթերին:

Մասնավորապես, Որոշման N 1 հավելվածի 14.5-րդ կետի համաձայն՝ մինչև 1996 թվականի նոյեմբերի 10-ը, իսկ ԼՂ տարածքում՝ մինչև 1998 թվականի հունվարի 19-ը աշխատած ժամանակահատվածի համար սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում, եթե անձն աշխատել է քաղաքային, շրջանային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներում, դրանց ենթակա դպրոցներում, գրադարաններում, բնակչահագործման (բնակարանային շահագործման) գրասենյակներում (տեղամասերում, տնտեսություններում):

Նույն հավելվածի 14.6-րդ կետի համաձայն՝ 1992 թվականի հունվարի 1-ից մինչև 2004 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում, եթե անձն աշխատել է (գրադեցրել է պաշտոն) Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665 Ն որոշման N 6 հավելվածում նշված կազմակերպություններում՝ անկախ այդ կազմակերպությունում գրադեցրած պաշտոնից կամ կատարած աշխատանքից:

Նույն հավելվածի 15-րդ և 15.8-րդ կետերի համաձայն՝ անձի համար սոցիալական վճարներ կատարած լինելը ճշտելու համար հիմք է ընդունվում նաև ԼՂ անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազան և ԼՂ պետական եկամուտների տեղեկատվական բազայում 2023 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ առկա տեղեկատվությունը:

Բացի այդ, ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակի իրավունքն իրացնելու ընթացակարգերը պարզեցնելու նպատակով ընդունված իրավական ակտերի համաձայն՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակների և նպաստների նշանակումն և վճարումը ՀՀ-ում կարող է իրականացվել ՄՄԾ ցանկացած տարածքային կենտրոն գրավոր դիմում ներկայացնելու կամ 2023 թվականի դեկտեմբերի 11-ից մինչև 2024 թվականի հունիսի 1-ը առցանց եղանակով (<https://socservice.am/>) դիմում ներկայացնելու դեպքում (եթե ԼՂ-ում կենսաթոշակ է նշանակվել և դիմում ներկայացնելու օրվա դրությամբ վճարումը դադարեցված չէ և առկա է ՀՀ բնակչության վայրի հասցեով հաշվառում):

#### **3.4.2. Իրավական ակտի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:**

Ներկայումս ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակի նշանակման գործընթացում առկա է լուրջ խնդիր: Այն անձինք, ովքեր հասել են կենսաթոշակային տարիքի և դիմում են ներկայացրել ՀՀ-ում կենսաթոշակ ստանալու համար, հանդիպում են հետևյալ դժվարությունների.

1. 1992-2013թթ. ժամանակահատվածի համար՝
  - Առանց աշխատանքային գրքույկի կամ սոցիալական վճարումները հաստատող փաստաթղթերի, նրանց աշխատանքային ստաժը չի հաշվարկվում
2. 2013թ-ից հետո ընկած ժամանակահատվածի համար՝
  - Նույնիսկ աշխատանքային գրքույկի կամ սոցիալական վճարումները հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում, եթե տվյալները բացակայում են էլեկտրոնային շտեմարանում, աշխատանքային ստաժը չի հաշվարկվում

Արդյունքում, այս քաղաքացիների բազմամյա աշխատանքային ստաժը չի հաշվառվում, և նրանց նշանակվում է նվազագույն կամ ավելի ցածր կենսաթոշակ՝ առաջացնելով լուրջ ֆինանսական դժվարություններ:

Աշխատանքային գրքույկում հաստատված ամբողջական ստաժը հաշվարկելու միակ եղանակը մնում է դատական կարգով այն հաստատելը: Կենսաթոշակի նշանակման, աշխատանքային գրքույկում հաստատված ստաժը հաշվարկելու վերաբերյալ դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ թիվ ՎՂ/4242/05/15 վարչական գործով Վարչական դատարանը վճռել է, որ կենսաթոշակ նշանակելու դիմումը ստացած մարմինը պարտավոր է աշխատանքային գրքույկի առկայության պարագայում որպես հիմնական փաստաթուղթ ընդունել հենց աշխատանքային գրքույկը՝ միևնույն ժամանակ գրկված չլինելով ինչպես դրանում կատարված գրառումների հավաստիության ստուգման, այնպես էլ վերը ներկայացված այլ իրավիճակներում սեփական միջոցներով որոշակի գործողություններ իրականացնելու իրավագործությունից: Միևնույն ժամանակ, դատարանը կարևոր է համարել ընդգծել, որ աշխատանքային գրքույկում սահմանված կարգով կատարված գրառումը որևէ հաստատման կարիք չունի և չի կարող ունենալ, այլ խնդիր է, որ վարչական մարմինը սեփական միջոցներով կարող է պարզել դրանում մատնանշված տվյալների ոչ հավաստի լինելը, իսկ հակառակ պարագայում պարտավոր է առաջնորդվել դրա հավաստի լինելու կանխավարկածով:

Թեև դատական կարգով հնարավոր է հաստատել աշխատանքային գրքույկում առկա ստաժը և պարտադրել իրավասու մարմնին վերահաշվարկել կենսաթոշակի չափը, այս լուծումը խնդրահարույց է մի քանի պատճառով:

Նախ, այն պահանջում է զգալի ժամանակ և ջանքեր: Բացի այդ, իրավունքների արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ փաստաբանական ծառայությունները կարող են լրացուցիչ ֆինանսական բեռ դառնալ արդեն իսկ դժվար վիճակում գտնվող բռնի տեղահանված անձանց համար:

Միաժամանակ, հաշվի առնելով խնդրի զանգվածային բնույթը և դրանից տուժած անձանց մեծ թիվը, նման դատական գործերի հոսքը կարող է էականորեն ծանրաբեռնել դատական համակարգը:

Նշված հարցի վերաբերյալ ԻՀԱ-ն 09.04.2024 թվականին գրավոր դիմել է ՀՀ ԱՍՀՆ, ինչին ի պատասխան նշվել է, որ ԼՂ անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազան հիմնականում ստացվել է և կիրառվում է անձանց աշխատանքային ստաժը հաստատելու համար:

Նախարարությունը նշել է նաև, որ շարունակվում են աշխատանքները բազայի մնացած մասը և ԼՂ պետական եկամուտների տեղեկատվությունը ստանալու ուղղությամբ: Միայն այս գործընթացի ավարտից հետո հնարավոր կլինի քննարկել ԼՂ-ից բռնի տեղահանված կամ այնտեղ աշխատած անձանց կենսաթոշակային հարցերը:

ԻՀԱ-ն հարցում է ուղարկել նաև ՀՀ վարչապետին 08.05.2024թ., որի պատասխանում նշվել է, որ 10.06.2024թ. ՄՄԾ և ՄՔԾ միջև ստորագրվել է տեղեկատվական բազաների հանձնման-ընդունման ակտ: Դրա համաձայն՝ ԼՂ հարկային մարմնի տեղեկատվական բազայի անհրաժեշտ տվյալները փոխանցվել են ՄՄԾ-ին և ներառվել են պետական կենսաթոշակային համակարգի շտեմարան 2024թ. հունիսի 17-ից:

Ըստ այդմ, ստացվում է, որ ներկայումս ՄՄԾ-ն ունի ամբողջական հասանելիություն ԼՂ հարկային մարմնի կողմից վարված տեղեկատվական բազայում և մասնակի հասանելիություն ԼՂ անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայում առկա տեղեկատվությանը: Միևնույն ժամանակ, նշյալ միջոցառումները խնդրի ամբողջական լուծում չեն ապահովել, և ԼՂ մի շարք բռնի տեղահանվածների շարունակվում է կենսաթոշակ նշանակվել նույն կերպ՝ առանց ամբողջական աշխատանքային ստաժը հաշվի առնելու:

Խնդրի համակարգային լուծման համար առկա է նոր մեխանիզմների մշակման անհրաժեշտություն, որոնցով կսահմանվի պարզեցված ընթացակարգ՝ թույլ տալով բռնի տեղահանված անձանց իրացնել իրենց իրավունքները և թեթևացնել սոցիալական բեռը: Կատարվելիք օրենսդրական փոփոխություններում պետք է ներառվեն դրույթներ, որոնք հնարավորություն կտան հաշվարկել և փոխհատուցել անցած ամիսների ընթացքում թերի վճարված կենսաթոշակի գումարները: Այսինքն՝ աշխատանքային գրքույկում հաստատված ողջ ստաժը հաշվի առնելու նորմը պետք է ունենա հետադարձ ուժ: Այս նպատակով նպատակահարմար է դիտարկել հատուկ հանձնախմբի ստեղծումը, որը կզբաղվի կենսաթոշակային հարցերի կարգավորմամբ:

### **3.5. Պետական նպաստներ**

#### **3.5.1. Իրավական կարգավորումների ամփոփ նկարագիրը.**

ՀՀ-ում պետական նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորում են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2014



թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» որոշմամբ: Սահմանված են պետական նպաստների հետևյալ տեսակները՝ ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը, հրատապ օգնությունը, երեխայի ծննդյան միանվագ նպաստը, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը, ժամանակավոր անաշխատունակության նպաստը, մայրության նպաստը, ծերության նպաստը, հաշմանդամության նպաստը, կերակրողին կորցնելու դեպքում նպաստը, թաղման նպաստը և խնամակալության նպաստը:

Նպաստների իրավունքը տվող պայմանները սահմանված են Օրենքով և միատեսակ կիրառություն ունեն ՀՀ-ում նպաստի իրավունք իրացնող բոլոր անձանց համար: Այսինքն, ԼՂ-ում նշանակված նպաստները ոչ թե շարունակվում են վճարվել ՀՀ-ում, այլ նշանակվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### **3.5.2. Իրավական ակտերի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:**

ՀՀ-ում ԼՂ բռնի տեղահանված անձանց կողմից պետական նպաստների իրավունքի իրացման գործընթացում վերհանված խնդիրները առնչվում են մասնավորապես թաղման և երեխայի ծննդյան միանվագ նպաստներ ստանալու:

Առաջին հիմնախնդիրը կապված է **երրորդ և հաջորդող երեխաների ծննդյան միանվագ նպաստների** հետ: ՀՀ կառավարության 2013 թ. սեպտեմբերի 28-ի նիստի N 39 արձանագրային որոշմամբ «Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան համար ընտանիքներին պետական աջակցության տրամադրման մասին» ծրագրով 2014 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ընտանիքում ծնված երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար տրամադրվող երեխայի ծննդյան միանվագ նպաստի մի մասը ծնողներին/ընտանիքին վճարվում է երեխայի ծննդից հետո, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, իսկ մյուս մասով ձևավորվում է ընտանեկան դրամագլուխ:

Ընտանեկան դրամագլխի վրա հաշվեգրվում են տոկոսներ, որոնց չափը և հաշվարկման կարգը սահմանվում են պետական աջակցության տնօրինողի և բանկի միջև կնքված համապատասխան պայմանագրով: Պետական աջակցության տնօրինողը, պայմանագրով սահմանված ժամկետում, կարող է կանխիկ կերպով ստանալ և տնօրինել

ընտանեկան դրամագլխի վրա հաշվարկված տոկոսները: Այդ ժամկետում չպահանջված տոկոսներն ավելանում են ընտանեկան դրամագլխին, որին հավելագրվում են տոկոսներ:

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N 275-ն որոշմամբ սահմանված է, որ երրորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը մեկ միլիոն դրամ է, որից պետական աջակցության հաշվին մուտքագրվող չափը՝ հինգ հարյուր հազար դրամ:

Այս իրավական կարգավորումների համաձայն՝ մինչև 2019 թվականի հունվարի 1-ը ծնված երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստից 500,000 դրամը ԱՀ-ի կողմից մուտքագրվել է բանկային պետական աջակցության հաշիվներին, հետևաբար ՀՀ-ում բռնի տեղահանված անձանց այս խմբի համար ներկայումս տոկոսների վճարման խնդիր չկա:

Մակայն 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծնված երրորդ և հաջորդ երեխաների նպաստները ԱՀ-ի կողմից չեն փոխանցվել բանկային համակարգ և չեն մուտքագրվել պետական աջակցության հաշիվներին, այլ պահվել են պետական գանձապետական հաշիվներում, իսկ այնուհետև որևէ իրավական ակտով չի կարգավորվել այս հարցը: Արդյունքում այդ ընտանիքները զրկվում են ընտանեկան դրամագլխի վրա հաշվեգրվող տոկոսներից:

Ստեղծված իրավիճակում ՀՀ պետական մարմինները հրաժարվում են պատասխանատվություն ստանձնել այս հարցում: Առկա է էական իրավական բաց՝ կապված պատասխանատվության և փոխհատուցման մեխանիզմների հետ: Տեղահանված ընտանիքները ոչ միայն կորցրել են իրենց օրինական տոկոսային եկամուտները, այլև չունեն իրավական լծակներ՝ իրենց իրավունքները պաշտպանելու համար:

Անհրաժեշտ է մշակել հստակ իրավական մեխանիզմներ՝ ուղղված ԼՂ բռնի տեղահանված անձանց՝ 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծնված երրորդ և հաջորդ երեխաների ծննդյան միանվագ նպաստներներից պետական աջակցության հաշիվներին մուտքագրված ընտանեկան դրամագլխի վրա հաշվեգրվող տոկոսների հատկացման իրավական բացի լուծմանը:

Հաջորդ խնդիրը վերաբերում է **թաղման նպաստների** տրամադրման գործընթացին: ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց թաղման նպաստի վճարման գործընթացի հետ կապված՝

Կառավարության 2024 թ. մարտի 28-ի թիվ 429-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 2011 թ. մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման N 1 հավելվածը լրացվել է 69.2-րդ կետով: Կրկնակի վճարումները բացառելու նպատակով, այդ կետով սահմանվել է, որ, եթե անձը, որի կենսաթոշակի էլեկտրոնային գործն առկա է ԼՂ-ի կենսաթոշակային բազայում և մինչև 2024 թ. դեկտեմբերի 31-ը մահացել է և չի հասցրել ՀՀ-ում դիմել կենսաթոշակի նշանակման համար, ապա ՀՀ-ում հուղարկավորվելու դեպքում նրա հուղարկավորությունը կատարած անձին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում նշանակվում է թաղման նպաստ, եթե առկա չէ տեղեկատվություն նրա մահվան կապակցությամբ ԼՂ-ի իրավասու մարմնի կողմից թաղման նպաստ վճարված լինելու վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, գործնականում արձանագրվել են բռնի տեղահանված անձանց դիմումների նախ ընդունման մերժման դեպքեր, այնուհետև՝ նպաստի տրամադրման մերժման դեպքեր՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ: Բացի այդ, ՀՀ-ում մահացած անձանց համար իրականացվել են անհիմն ստուգումներ ԱՀ-ից նպաստի ստացման վերաբերյալ, չնայած որ մահվան պահին ԱՀ-ն դադարել էր գոյություն ունենալ:

Ըստ այդ, անհրաժեշտ է թաղման նպաստների դիմումների ընդունման և մշակման գործընթացի բարելավում և պատշաճ իրականացում, ինչպես նաև ԱՀ-ում ծնված երրորդ և հաջորդող երեխաների ծննդյան կապակցությամբ տրամադրվող գումարների վճարման մեխանիզմների հստակեցում:

#### **4. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ**

##### **4.1. ՀՀ կառավարության N 57-Լ որոշում և N 1756-Լ որոշում**

##### **4.1.1. Իրավական ակտի ամփոփ նկարագիրը:**

ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի «2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» N 57-Լ որոշումը սահմանում է ԼՂ բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության ծրագիրը:

Ծրագրի շահառու կարող են հանդիսանալ 2023թ. ԼՂ-ից բռնի տեղահանված այն գործազուրկ անձինք, որոնք ՀՀ-ում զբաղված չեն «Զբաղվածության մասին» օրենքի 5-րդ հոդվածով սահմանված գործունեության որևէ տեսակով և «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգում» առկա տեղեկատվության հիման վրա վերջին մեկ ամսվա ընթացքում չեն հանդիսացել հարկ վճարող աշխատող:

Ծրագրով նախատեսվում է՝

- Մինչև 6 ամիս տևողությամբ ուսուցում՝ ամսական 50,000 դրամ կրթաթոշակով և մինչև 50,000 դրամ ուսման վարձի փոխհատուցմամբ.
- Աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթաց՝ 165,000 դրամ աշխատավարձով (3 ամիս).
- Գործատուին տրվում է փոխհատուցում՝ եկամտային հարկի, դրոշմանիշային վճարի և սոցիալական վճարի չափով (մինչև 50,000 դրամ):

Բացի այդ, ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչներին օժանդակելու և նրանց մասնագիտական աշխատանքի հնարավորությունը ՀՀ դպրոցներում ապահովելու նպատակով դեռևս 2023թ. հոկտեմբերի 12-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրը հաստատելու մասին» N 1756-Լ որոշումը: Ծրագրի շահառուներ են հանդիսանում 2020 թվականին և 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցած ռազմական գործողությունների արդյունքում ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչները: Ծրագրին դիմելու ժամկետը 2024թ. դեկտեմբերի 31-ն է: Ծրագրի բարեհաջող և թիրախային իրականացման համար ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ ԿԳՄՍՆ) գործարկվել է <https://kadrer.emis.am> էլեկտրոնային հարթակը, որտեղ գրանցվելով՝ ծրագրի շահառուները կարող էին գործուղման հայտ ներկայացնել:

#### **4.1.2. Իրավական ակտերի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:**

Իրավական ակտի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները բարդ և բազմաշերտ են: Գործազրկությունը լուրջ խնդիր է բռնի տեղահանված անձանց համար, որոնք բախվում են մի շարք արգելքների: Պետական մարմիններում նրանց աշխատանքի ընդունելու հիմնական խոչընդոտը ՀՀ քաղաքացիություն չունենալն է, իսկ մասնավոր ընկերություններում՝ տարիքային խտրականությունը: Արդյունքում, գործնականում նույնիսկ այս զբաղվածության աջակցության ծրագրերի շրջանակներում նրանք շարունակում են հանդիպել զգալի դժվարությունների, թեև ծրագրերով որևէ տարիքային խտրականություն և սահմանափակում նախատեսված չէ:

N 57-Լ որոշմամբ հաստատված ծրագրի մյուս խնդրահարույց կողմը վերաբերում է առաջարկվող ուսուցման բովանդակությանը: Ծրագրով գործատուն ինքն է ներկայացնում իր մոտ թափուր աշխատատեղի մասով հայտ՝ նշելով այն համալրելու նպատակով անհրաժեշտ մասնագիտական հմտությունների և կարողությունների պահանջները: Միննույն ժամանակ, գերակշռող ուղղություններով, օրինակ՝ վարսահարդարման և մատնահարդարման ծառայությունների դասընթացների նպատակահարմարությունը կասկած է հարուցում գյուղական բնակավայրերում: Հաշվի առնելով բնակապահովման ծրագրերի՝ գյուղական տարածքներին ուղղված քաղաքականությունը, անորոշ է մնում, թե որքանով կարող է այս տեսակի ուսուցումը իրական հնարավորություններ ստեղծել բռնի տեղահանված անձանց համար:

Բացահայտված մարտահրավերները վկայում են, որ անհրաժեշտ կլինի ավելի համապարփակ աջակցություն՝ բռնի տեղահանված անձանց հայկական աշխատաշուկա արդյունավետ ինտեգրելու համար: Աշխատանքային ինտեգրման աջակցությունը և մասնագիտական վերապատրաստումը պահանջում են արմատական վերախմբման և վերաբնակարարման՝ ներդնելով ճկուն մեխանիզմներ, որոնք կնվազեցնեն տարիքային խտրականությունը, կստեղծեն հավասար մրցակցային միջավայր և կապահովեն տեղահանված անձանց՝ աշխատուժի ներկա կարիքներին համապատասխան հմտությունների ձեռքբերումը՝ անկախ նրանց տարիքից և կրթական հիմքից: Դա կարող է իրականացվել գործատուների համար խրախուսական ծրագրերի, աշխատաշուկայի արդի պահանջների և բռնի տեղահանված անձանց կարիքների գնահատման խորը վերլուծության վրա հիմնված վերապատրաստման մոդուլների միջոցով:

## **5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **5.1. ՀՀ կառավարության N 2326-Ն որոշում և N 481-Ա որոշում**

#### **5.1.1. Իրավական ակտերի ամփոփ նկարագիրը:**

ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Լեոնային Ղարաբաղի կառավարության և նրա ստեղծած հիմնադրամների, առանձին իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպությունների դրամական պահանջների (գույքային իրավունքների) զիջման դիմաց պետական գանձապետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, հետգնման, մարման առանձնահատկությունները, առանձին իրավաբանական և ֆիզիկական անձանց պարտավորությունների ընտրանքի չափանիշները, ֆինանսական կազմակերպությունների կողմից դրամական պահանջների (գույքային իրավունքների) փոխանցման, փոխանցված դրամական պահանջների (գույքային իրավունքների) վերաբերյալ տեղեկատվության հրապարակման կարգը սահմանելու մասին» N 2326-Ն որոշմամբ կարգավորվում է ԼՂ կառավարության, նրա հիմնադրամների և առանձին իրավաբանական ու ֆիզիկական անձանց նկատմամբ ֆինանսական կազմակերպությունների պահանջների փոխանցման կարգը ՀՀ կառավարությանը:

Որոշման N 2 հավելվածի համաձայն ՀՀ կառավարությանը փոխանցման ենթակա են ֆինանսական կազմակերպություններում ձևավորված և 19.09.2023թ. դրությամբ վերջիններիս ֆինանսական հաշվետվություններում առկա հետևյալ պարտավորությունների և դրանց գծով հաշվարկված տոկոսների և տույժերի գծով դրամական պահանջները (գույքային իրավունքները).

1. ԼՂ կառավարության պարտատոմսերից ծագող պարտավորություններ:
2. ԼՂ հիմնադրամների պարտատոմսերից ծագող պարտավորություններ:
3. ԼՂ հիմնադրամներին տրամադրված վարկեր, ԼՂ հիմնադրամների նկատմամբ ձևավորված դեբիտորական պարտքեր:
4. «Արցախի ներդրումային ընկերության» կողմից հիմնադրված «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈւՎԿ ՓԲԸ-ին տրամադրված վարկեր և այլ պահանջներ:
5. Ֆիզիկական անձանց վարկեր (բացառությամբ դրամական միջոցներով ապահովված վարկերի, ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով կամ ավտոմեքենաների գրավով

ապահովված վարկերի, ՀՀ տարածքում գտնվող անշարժ գույքի գրավով ապահովված վարկերի), այդ թվում՝

5.1 ԼՂ քաղաքացիներին ԼՂ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման կամ վերանորոգման համար տրամադրված հիպոթեքային վարկեր,

5.2 ԼՂ քաղաքացիներին տրամադրված սպառողական կամ գյուղատնտեսական վարկեր՝ ԼՂ տարածքում անշարժ գույքի գրավադրմամբ,

5.3 ԼՂ քաղաքացիներին ԼՂ տարածքում օգտագործման նպատակով տրամադրված ոսկու գրավադրմամբ տրամադրված սպառողական վարկեր,

5.4 ԼՂ քաղաքացիներին ԼՂ տարածքում օգտագործման նպատակով կամ ԼՂ-ի ունեցած եկամուտների ապահովմամբ տրամադրված այլ սպառողական և գյուղատնտեսական վարկեր,

5.5 5.1-ից 5.4-րդ կետերի չափանիշներին բավարարող և 08.11.2023թ. դրությամբ ֆիզիկական անձանց անհուսալի վարկեր՝ բացառությամբ 30.09.2020թ. դրությամբ անհուսալի եղած վարկերի,

5.6 ՀՀ քաղաքացիներին ԼՂ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման կամ վերանորոգման համար տրամադրված հիպոթեքային վարկեր՝ բացառությամբ 30.09.2020թ. դրությամբ անհուսալի վարկերի,

5.7 ՀՀ քաղաքացիներին ԼՂ տարածքում օգտագործման նպատակով տրամադրված սպառողական կամ գյուղատնտեսական վարկեր (այդ թվում՝ ոսկու գրավադրմամբ), որոնք ապահովված են եղել ԼՂ տարածքում գտնվող անշարժ գույքի գրավով կամ ԼՂ-ից ունեցած եկամուտներով, կամ վարկի տրամադրման պահին վարկառուն հաշվառված է եղել ԼՂ տարածքում՝ բացառությամբ 30.09.2020թ. դրությամբ անհուսալի վարկերի:

5.8 ԼՂ քաղաքացիներին տրամադրված սպառողական վարկեր (այդ թվում՝ ոսկու գրավադրմամբ), որոնց օգտագործման վայրը և վարկառուի եկամուտների ստացման աղբյուրը հայտնի չէ՝ բացառությամբ 30.09.2020թ. դրությամբ անհուսալի վարկերի:

5.9 5.1-ից 5.8-րդ կետերի չափանիշներին բավարարող լուծարման գործընթացում գտնվող ֆինանսական կազմակերպությունների դրամական պահանջներ (գույքային իրավունքներ):

6. Իրավաբանական անձանց վարկեր, այդ թվում՝

6.1 ԼՂ-ում գրանցված իրավաբանական անձանց ԼՂ տարածքում գործունեություն ծավալելու նպատակով տրամադրված վարկեր, որոնք կամ որոնց մի մասն ապահովված են ԼՂ-ում առկա գույքով՝ զուված տվյալ վարկերի ապահովվածություն հանդիսացող՝ ՀՀ-ում գտնվող անշարժ գույքի, այլ հիմնական միջոցների և դրամական միջոցների արժեքի չափով,

6.2 6.1-ին կետի չափանիշներին բավարարող և 08.11.2023թ. դրությամբ անհուսալի վարկեր՝ բացառությամբ 30.09.2020թ. դրությամբ անհուսալի վարկերի:

ՀՀ կառավարությունը 04.04.2024թ. ընդունել է «Ֆիզիկական անձանց պարտավորությունները ներելու և որպես պետական ֆինանսական աջակցություն ձևակերպելու մասին» N 481-Ս որոշումը, որով ներվել են ոսկյա իրերի գրավադրմամբ տրամադրված սպառողական վարկերով ֆիզիկական անձանց պարտավորությունները, պայմանով, որ այդ պարտավորությունների չափը յուրաքանչյուր պարտապանի գծով բոլոր ֆինանսական կազմակերպություններում 29.12.2023թ. դրությամբ չի գերազանցում 2,500,000.0 դրամը:

Բացի այդ, ՀՀ կառավարության N 2326-Ն որոշման մեջ ՀՀ կառավարության 17.10.2024թ.-ի N 1638-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների արդյունքում՝ ՀՀ կառավարության իրավասություն է վերապահվել ներել նաև 5.7-րդ, 5.8-րդ և 5.9-րդ տողերում նախատեսված ոսկյա իրերի գրավադրմամբ տրամադրված սպառողական վարկերով ֆիզիկական անձանց պարտավորությունները:

#### **5.1.2. Իրավական ակտերի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:**

Ներկայացված իրավական ակտերում բացակայում են երկու կարևոր ֆինանսական խնդիրների լուծման մեխանիզմներ՝ վնասի փոխհատուցման և վարկային պարտավորությունների կարգավորման ուղղությամբ, որոնք պահանջում են անհապաղ լուծում՝ սոցիալական արդարության և ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից:



*Ա) Նյութական վնասի փոխհատուցման մեխանիզմների բացակայություն*

Ընթացիկ իրավական կարգավորումները չեն ներառում 2020 թվականի սեպտեմբերի 27-ի պատերազմի հետևանքով բռնի տեղահանված ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված նյութական վնասի փոխհատուցման ծրագիր: Նախկինում «2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով նյութական վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձանց աջակցության» հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների համաձայն՝ ԱՀ նյութական վնասների կոմիտեի կողմից իրականացվում էր 2020 թվականի սեպտեմբերի 27-ին ԱՀ դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված նյութական վնասի փոխհատուցման ծրագիր:

Իրականացված գնահատումը ներառում էր հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների, ութից ոչ ավել, բացառությամբ վարորդի, նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենայի, բեռնատար ավտոմեքենայի, ինը և ավելի նստատեղ ունեցող ավտոմեքենայի, գյուղատնտեսական, շինարարական և հատուկ տեխնիկայի, նյութական ակտիվների, խոշոր եղջերավոր կենդանիների, մանր եղջերավոր կենդանիների, խոզի և մեղվաընտանիքի, պտղատու այգու և խաղողայգու փոխհատուցում: Մասնավորապես, նյութական վնասի գնահատման արդյունքում շահառուներին տրվել էր ծանուցում դիմումը բավարարելու վերաբերյալ, որտեղ նշված էր նաև գնահատված նյութական վնասի չափը: ԱՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից շահառուներին տրամադրվում էր հասարակ գանձապետական մուրհակ, որը հնարավորություն կտար նրանց ստանալ գումարը:

ԼՂ նախկին բնակիչների մի մասը նախքան 2023 թվականի սեպտեմբերի 19-ի պատերազմական գործողությունները սկսելը արդեն ստացել էր փոխհատուցման գումարը, իսկ մյուս մասը 2023 թվականի սեպտեմբերի 19-ի ԱՀ դեմ սանձազերծված պատերազմի և դրա հետևանքով պայմանավորված բռնի տեղահանման արդյունքում չի ստացել նյութական վնասի հատուցումը:

ԻՀԱ-ն այդ նպատակով գրություն է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն 08.05.2024 թվականին, որին ի պատասխան նշվել է, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին ԼՂ-ից բռնի տեղահանված՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված նյութական

վնասի փոխհատուցման ծրագիր իրականացնելու հնարավորությունը նախարարությունը ներկայում չի քննարկում:

Ելնելով միևնույն կատեգորիայի անձանց նկատմամբ միատեսակ մոտեցում ցուցաբերելու սկզբունքից և հաշվի առնելով ստեղծված ծանր սոցիալական դրությունը՝ առաջարկում ենք մշակել նոր կարգ, որով կկարգավորվի 2020 թվականի սեպտեմբերի 27-ի ԱՀ դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով նյութական վնաս կրած և փոխհատուցում չստացած անձանց հարցը:

***F) Առողջապահական ծախսերի փոխհատուցման մեխանիզմների բացակայություն.***

Ընթացիկ իրավական կարգավորումները չեն ներառում 2020 թվականի սեպտեմբերի 27-ի պատերազմի հետևանքով բռնի տեղահանված անձանց բժշկական ծախսերի փոխհատուցման ծրագիր: Նախկինում ԱՀ առողջապահության նախարարության կողմից իրականացվում էր բժշկական ծախսերի փոխհատուցման ծրագիր:

ԼՂ նախկին բնակիչների մի մասը նախքան 2023 թվականի սեպտեմբերի 19-ի պատերազմական գործողությունները սկսելը արդեն ստացել էր փոխհատուցման գումարը, իսկ մյուս մասը 2023 թվականի սեպտեմբերի 19-ի ԱՀ դեմ սանձազերծված պատերազմի և դրա հետևանքով պայմանավորված բռնի տեղահանման արդյունքում չի ստացել բժշկական ծախսերի փոխհատուցումը:

Ելնելով միևնույն կատեգորիայի անձանց նկատմամբ միատեսակ մոտեցում ցուցաբերելու սկզբունքից և հաշվի առնելով ստեղծված ծանր սոցիալական դրությունը՝ առաջարկում ենք մշակել նոր կարգ, որով կկարգավորվի ԱՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված և դեռևս չփոխհատուցված բժշկական ծախսերի փոխհատուցման հարցը:

**Գ) ԱՀ ներդրումային հիմնադրամի կողմից վարկային պարտավորությունների թերի փոխհատուցում**

Իրավական ակտերում բացակայում են հստակ մեխանիզմներ՝ կապված մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ի պատերազմը ԱՀ ներդրումային հիմնադրամի ստանձնած վարկային պարտավորությունների լիարժեք կատարման հետ: Մասնավորապես, 2020 թվականի

պատերազմից հետո ԱՀ կառավարությունը պարտավորվել էր Ներդրումային հիմնադրամի միջոցով փոխհատուցել անձանց վարկային պարտավորությունները, սակայն պարզվել է, որ պարտավորությունների մի մասը չի փոխանցվել:

Արդյունքում, Արցախից բռնի տեղահանված անձինք շարունակում են կրել վարկային պարտավորություններ և տույժեր, իսկ որոշ դեպքերում նրանց գույքի նկատմամբ կիրառվում են բռնագանձումներ և արգելանքներ, ինչը ստեղծել է լուրջ սոցիալական խնդիրներ տեղահանված անձանց համար:

Ելնելով միևնույն կատեգորիայի անձանց նկատմամբ միատեսակ մոտեցում ցուցաբերելու սկզբունքից և հաշվի առնելով ստեղծված ծանր սոցիալական դրությունը՝ առաջարկում ենք մշակել նոր կարգ, որով կկարգավորվի ԱՀ Ներդրումային հիմնադրամի կողմից ստանձնած և չկատարված՝ Արցախի բնակիչների՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ի պատերազմը վարկային պարտավորությունների հարցը:

## **6. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ**

Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության կարևորագույն մարտահրավերներից է իրավաբանական փաստերի հաստատման անհրաժեշտությունը: Ներկա իրավիճակում Արցախի տարածքում տրված փաստաթղթերի, կայացված որոշումների և ակտերի իրավական կարգավիճակի հարցը դեռևս մնում է չկարգավորված: Մա լուրջ խնդիրներ է առաջացնում ինչպես անհատների իրավունքների պաշտպանության, այնպես էլ պետական կառավարման արդյունավետության տեսանկյունից:

### **6.1. Դատական ակտերի ճանաչում**

2023թ. սեպտեմբերի 19-ից հետո առաջացած իրավական անորոշության պայմաններում առանցքային նշանակություն է ստացել Արցախի դատական համակարգի կողմից կայացված ակտերի իրավական ուժի խնդիրը: **Քրեական, քաղաքացիական և վարչական գործերով կայացված վերջնական դատական ակտերի, ինչպես նաև չավարտված վարույթների իրավական կարգավիճակի անորոշությունը էականորեն խոչընդոտում է արդարադատության իրականացմանը:** Հատկապես խնդրահարույց է քրեական գործերով կալանավորված անձանց

իրավական կարգավիճակը և քաղաքացիական գործերով (ամուսնալուծություն, ալիմենտ) դատական ակտերի կատարման հնարավորությունը:

Ըստ այդմ, առկա է Արցախի դատական համակարգի կողմից կայացված ակտերի ճանաչման և չավարտված վարույթների շարունակականության անհրաժեշտությունն ՀՀ իրավական համակարգում՝ պահպանելով մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության իրականացման հիմնարար սկզբունքները:

ՀՀ արդարադատության նախարարությունը (այսուհետ՝ ԱՆ) մատնանշում է Արցախի դատական ակտերի ճանաչման մի շարք խնդիրներ՝ Արցախի դատական համակարգի չգործելը, իրավական ակտերի ուժը կորցնելը, և ակտերի իսկությունը ստուգելու մեխանիզմների բացակայությունը: Նախարարությունը կարծում է, որ գործերի շարունակականությունը չի կարող ընդհանուր կանոն համարվել, քանի որ դա չի նախատեսված ՀՀ դատավարական օրենսդրությամբ, և կհանգեցնի դատարանների ծանրաբեռնվածության: Որպես լուծում՝ առաջարկվում է կիրառել իրավաբանական փաստերի հաստատման վարույթը կամ բաց թողնված ժամկետների վերականգնման մեխանիզմը: Բացի այդ, նշվում է, որ ՀՀ դատական համակարգում արդեն ձևավորվել է պրակտիկա, որտեղ Արցախի դատական ակտերը ճանաչվում են որպես օտարերկրյա պետության դատական ակտեր: Դատալեքս համակարգի տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ դատարանները բավարարել են նման ակտերի ճանաչման դիմումները ալիմենտների բռնագանձման, ծնողական իրավունքների, ամուսնալուծության և աշխատանքային ստաժի հաստատման գործերով:

ԻՀԱ դիրքորոշմամբ՝ նոր դատական պրոցեսի մեկնարկը խնդրի լուծում չի հանդիսանում և ընդհակառակը՝ այն ավելի ծանրաբեռնելու է ՀՀ դատական համակարգը: Բացի այդ, տեղահանված անձանց համար նոր դատական գործեր սկսելու ֆինանսական բեռը և փաստաբան վարձելու անհնարինությունը էական խոչընդոտներ են արդարադատության հասանելիության ապահովման տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել հատուկ իրավական կարգավորում, որը հնարավորություն կտա առանց լրացուցիչ դատական գործընթացների ՀՀ-ում ճանաչել Արցախի դատական ակտերը՝ հիմնվելով մարդու իրավունքների պաշտպանության, դատական շարունակականության և արդարադատության հասանելիության սկզբունքների վրա: Միջազգային ատյանների որոշ նախադեպերը հաստատում են, որ չճանաչված կամ դե

Ֆակտո իրավասություն ունեցող տարածքների որոշումները կարող են ընդունվել իրավունքի գերակայության սկզբունքով, երբ դրանց ճանաչումը նպաստում է անձանց հիմնարար իրավունքների պաշտպանությանը: Այս նախադեպերը կարող են հիմք ծառայել Արցախի դատական ակտերի ճանաչման համար՝ ստեղծելով միջանկյալ կամ անցումային մեխանիզմներ, որոնք թույլ կտան ապահովել դատական ակտերի շարունակականությունն առանց նոր գործերի պարտադիր հարուցման ՀՀ-ում: Միաժամանակ, նոր մեխանիզմների չմշակման պարագայում պետք է վերանայել պետությունների գանձման քաղաքականությունը՝ նախատեսելով արտոնություններ բռնի տեղահանված անձանց համար:

## **6.2. Քաղաքացիական կացության ակտեր**

### **6.2.1. ՔԿԱԳ մարմինների կողմից փաստաթղթերի վերականգնում**

Քաղաքացիական կացության ակտերի վերականգնումը ԼՂ բռնի տեղահանված անձանց համար առաջացնում է մի շարք էական խոչընդոտներ, որոնք պահանջում են համակարգված լուծումներ:

Առաջին հերթին, լուրջ **խնդիրներ են առաջանում փաստաթղթերի բացակայության պատճառով**: Բռնի տեղահանված անձանց մի զգալի մասը ՀՀ է տեղափոխվել առանց անհրաժեշտ փաստաթղթերի: «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքի 72-րդ հոդվածի համաձայն, ՔԿԱԳ գործակալությունը քաղաքացիական կացության ակտային գրանցումները վերականգնում է միայն երկու դեպքում՝ երբ առկա են հաստատող փաստաթղթեր, որ համապատասխան ակտի պետական գրանցումը նախկինում կատարվել է, կամ առկա է իրավաբանական փաստի մասին նոտարական ակտ կամ դատարանի վճիռ: ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար սահմանված է արտոնություն՝ եթե համապատասխան ակտային գրանցումը հայտնաբերվում է ՆԳՆ ՄԲԾ-ի կողմից ԱՆ-ին փոխանցված ԼՂ ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից վարվող գրանցամատյանների փաստաթղթային արխիվում, դիմումը բավարարվում է առանց լրացուցիչ փաստաթղթերի պահանջի: Գործնականում, սակայն, այս արտոնությունը սահմանափակ է կիրառվում, քանի որ ՀՀ-ին փոխանցվել է ԼՂ ՔԿԱԳ փաստաթղթային արխիվի միայն մի մասը: Արդյունքում, բազմաթիվ անձանց փաստաթղթերի վերաբերյալ տվյալները բացակայում են փոխանցված արխիվներում, ինչն ինքնին դարձել է մերժումների հիմնական պատճառ:

Հատկապես խնդրահարույց են ծննդի, ամուսնության և ամուսնալուծության վկայականների վերականգնման դեպքերը: Այս փաստաթղթերը հիմնարար նշանակություն ունեն անձի իրավական կարգավիճակի համար, և դրանց բացակայությունը հետագայում խոչընդոտում է նաև քաղաքացիություն ստանալու գործընթացին: Բռնի տեղահանված անձինք այսպիսով հայտնվում են կրկնակի խոցելի վիճակում՝ չկարողանալով վերականգնել իրենց քաղաքացիական կացության փաստաթղթերը և, որպես հետևանք, չկարողանալով ձեռք բերել քաղաքացիություն:

Երկրորդ հիմնական խնդիրը **տեղեկատվական բացն** է: ԱՆ պաշտոնական դիրքորոշումը՝ դիմումատուներին մանրամասն պարզաբանումներ և ուղղորդում տրամադրելու վերաբերյալ, գործնականում հաճախ չի պահպանվում: ՔԿԱԳ սպասարկման կենտրոնների աշխատակիցները չեն ապահովում պատշաճ իրազեկում, պաշտոնական ուղեցույցները բացակայում են, իսկ տրամադրվող տեղեկատվությունը հաճախ հակասական է: Բռնի տեղահանված անձինք հայտնվում են բյուրոկրատական փակուղիում՝ չունենալով պահանջվող փաստաթղթերի ցանկի և անհրաժեշտ վարչական ընթացակարգերի վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն: Նույնիսկ մերժման որոշ դեպքերում դիմումատուին հաճախ չի տրամադրվում մերժման պաշտոնական որոշում և չեն պարզաբանվում հետագա քայլերը:

Երրորդ խնդիրը **ֆինանսական բնույթի** է: Պետական տուրքերի բարձր արժեքը և դատական կարգով փաստաթղթերի վերականգնման ծախսատար գործընթացը լրացուցիչ բեռ են դառնում բռնի տեղահանված անձանց համար: ՔԿԱԳ մարմինների կողմից մերժում ստանալով, անձինք ստիպված են դիմել դատարան՝ համապատասխան փաստերը հաստատելու համար, ինչը պահանջում է նշանակալի ժամանակային և ֆինանսական ռեսուրսներ:

Հաշվի առնելով բռնի տեղահանված անձանց հատուկ իրավիճակը, առաջարկվում է ներդնել ՔԿԱԳ փաստաթղթերի վերականգնման պարզեցված ընթացակարգեր նշյալ կատեգորիայի անձանց համար: Մասնավորապես, անհրաժեշտ է սահմանել այլընտրանքային փաստաթղթերի և ապացույցների ցանկ, որոնք կարող են ընդունվել փաստաթղթերի վերականգնման համար՝ հաշվի առնելով բռնի տեղահանման պատճառով առաջացած սահմանափակումները: Միաժամանակ, պետք է վերանայել պետտուրքերի գանձման քաղաքականությունը՝ նախատեսելով արտոնություններ բռնի տեղահանված անձանց համար: Սա կարող է ներառել պետտուրքերից ազատում կամ զգալի զեղչեր՝ փաստաթղթերի

վերականգնման համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել քաղաքացիություն ստանալու գործընթացին առնչվող փաստաթղթերի վերականգնմանը՝ սահմանելով արագացված ընթացակարգեր այն դեպքերի համար, երբ փաստաթղթերի բացակայությունը խոչընդոտում է քաղաքացիության ձեռքբերմանը: Միաժամանակ, անհրաժեշտ է էապես բարելավել ՔԿԱԳ մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացը՝ հատուկ ուշադրություն դարձնելով դիմողների պատշաճ իրազեկմանը և ուղղորդմանը: Այս համատեքստում առանցքային նշանակություն ունի ՔԿԱԳ մարմինների ակտիվ դերակատարությունը՝ դիմողներին անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական շրջանակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և համապատասխան խորհրդատվության ապահովման գործում:

## **6.2.2. Նոտարական կարգով փաստերի հաստատում**

**Նոտարների իրավասության շրջանակներում գտնվող գործողությունների՝ մասնավորապես ծննդյան, ամուսնության, ամուսնալուծության և մահվան փաստերի հաստատման հետ կապված առաջանում են խնդիրներ:** Նոտարները հաճախ հրաժարվում են այդ գործողությունները կատարել՝ պատճառաբանելով ծանրաբեռնվածությունը կամ փորձի բացակայությունը:

Հաշվի առնելով բռնի տեղահանված անձանց հատուկ իրավիճակը, առաջարկվում է վերանայել իրավաբանական փաստերի նոտարական հաստատման գործընթացը: Մասնավորապես, անհրաժեշտ է մշակել հատուկ ուղեցույցներ նոտարների համար՝ Արցախից տեղահանված անձանց գործերի վարման և իրավաբանական փաստերի հաստատման վերաբերյալ, ինչպես նաև ապահովել նոտարների մասնագիտական վերապատրաստումը՝ նման գործերի քննության առանձնահատկությունների վերաբերյալ:

## **6.3 Գույքային իրավունքներ հաստատող փաստաթղթեր**

### **6.3.1. Կադաստրային փաստաթղթերի վերականգնում**

Գույքային իրավունքների գրանցման համակարգի վերականգնման գործընթացը դեռևս բախվում է մի շարք մարտահրավերների: Թեև իրականացվել են միջոցառումներ ԱՀ կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի գույքային տվյալների բազան ՀՀ

տարածքում վերագործարկման ուղղությամբ, սակայն առկա են էական խնդիրներ այդ տեղեկատվության բռնի տեղահանված անձանց տրամադրման հարցում: **Գործընթացի անկատարությունը հանգեցնում է գույքային իրավունքների պետական գրանցման վկայականների վերականգնման մերժումների:**

Հաշվի առնելով բռնի տեղահանված անձանց իրավական կարգավիճակի առանձնահատկությունները, առաջարկվում է համակարգային լուծումներ տալ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի վերականգնման գործընթացին: Մասնավորապես, անհրաժեշտ է ներդնել պարզեցված ընթացակարգեր գույքային իրավունքների վերականգնման համար և սահմանել փաստաթղթերի վերականգնման հատուկ մեխանիզմներ՝ հաշվի առնելով առկա փաստաթղթերի հնարավոր բացակայությունը կամ վնասվածությունը: Այս ընթացակարգերը պետք է ներառեն այլընտրանքային ապացույցների ընդունման հնարավորությունը: Անհրաժեշտ է ներդնել արագացված ընթացակարգ հրատապ դեպքերի համար, երբ բռնի տեղահանվածները ունեն անհետաձգելի կարիքներ՝ կապված իրենց գույքային իրավունքների հաստատման հետ: Թափանցիկության և արդյունավետության սկզբունքների վրա վարչարարության պատշաճ իրականացման նպատակներով կարևոր է իրականացնել ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակիցների վերապատրաստում՝ նոր համակարգի և ընթացակարգերի վերաբերյալ, ինչը կնպաստի ծառայությունների որակի բարձրացմանը:

### **6.3.2. Ժառանգության իրավունքի փաստաթղթերի տրամադրում**

Բռնի տեղահանված անձանց ժառանգության իրավունքի իրացման գործընթացում առկա են մի շարք էական խոչընդոտներ, որոնք պահանջում են համակարգված լուծումներ:

Առաջին հերթին, լուրջ **խնդիրներ են առաջանում փաստաթղթերի բացակայության կամ վնասված լինելու պատճառով:** Բռնի տեղահանված անձանց մի զգալի մասը ՀՀ է տեղափոխվել առանց անհրաժեշտ փաստաթղթերի: Մյուսների մոտ փաստաթղթերը խիստ վնասված են կամ պարունակում են սխալներ: Չեն պահպանվել նաև կտակները, ինչի արդյունքում դժվարանում կամ անհնար է դառնում նրանց ժառանգական իրավունքների ձևակերպման գործընթացը: Հատկապես խնդրահարույց են ժառանգատուի մահվան փաստը հաստատող փաստաթղթերի, ժառանգների կազմը հաստատող փաստաթղթերի բացակայությունը: Հաճախ



դժվարություններ են առաջանում նաև ժառանգությունը ընդունած կամ դրանից հրաժարված լինելու փաստը ճշտելու հարցում: Ներկայումս նոտարները հաճախ մերժում են ժառանգության իրավունքի վկայագրերի տրամադրումը՝ պահանջվող փաստաթղթերի բացակայության պատճառով, ինչը լրջորեն խոչընդոտում է տեղահանված անձանց ժառանգության իրավունքների ձևակերպումը:

Էական խնդիր է նաև **ժառանգության ընդունման վեցամսյա ժամկետի հետ կապված դժվարությունները**: Բռնի տեղահանված անձանց համար այս ժամկետի պահպանումը հաճախ անհնարին է դառնում տեղահանման հետևանքով առաջացած օբյեկտիվ պատճառներով: Այս հարցում որպես առաջընթաց քայլ կարելի է դիտարկել այն, որ 2024թ. հունվարին ԱՆ-ն իրավասու մարմինների հետ խորհրդակցության արդյունքում թույլատրվել է ժառանգներին ժառանգության ընդունման դիմումներ տալ իրենց բնակության վայրի նոտարին՝ ժառանգության ընդունման վեցամսյա ժամկետը բաց չթողնելու համար: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է համակարգային վերանայել այս ժամկետները՝ նախատեսելով հատուկ դրույթներ բաց թողնված ժամկետների վերականգնման համար:

Իրավաբանական նշանակության խնդիր է ներկայացնում **ժառանգության բացման վայրի հետ կապված հարցը**: Ժառանգության ընդունման դիմումները տրվել են բոլոր մարզերում, որտեղ բնակություն են հաստատել ԼՂ-ից բռնի տեղահանվածները, սակայն ժառանգության բացման վայր է համարվում Երևան քաղաքը: Այս պարագայում, ԼՂ-ից բռնի տեղահանվածները չեն կարողանում ձևակերպել իրենց ժառանգական իրավունքները առկա օրենսդրական կարգավորումների պայմաններում: Այս հարցի առնչությամբ ԱՆ-ն քննարկման առարկա է դարձրել այն հնարավորությունը, որ ԼՂ-ում մահացած անձանց ժառանգները ժառանգության իրավունքի վկայագիրը կարողանան ստանալ ժառանգության բացման վայրի այն նույն նոտարից, որին դիմել էին ժառանգությունը ընդունելու համար:

**Ժառանգական զանգվածի որոշման խնդիրը** ևս էական է: Հաճախ բռնի տեղահանված անձանց մասով ժառանգական զանգվածի մեջ մտնում է միայն բանկում ժառանգատուի հաշվին առկա գումարը (աշխատավարձ, թոշակ, ավանդ և այլն): Բարդությունն այն է, որ շատ դեպքերում գումարները գտնվել են «Արցախ» բանկում, որը գտնվում է Երևան քաղաքում և այլ քաղաքներում մասնաճյուղեր չունի: Մյուս բանկերի դեպքում էլ, հաշվեհամարները բաշխված չեն ըստ տարածաշրջանների, այլ կառավարվում են գլխամասերում, որոնք գտնվում են Երևան

քաղաքում: Այս իրավիճակը լրացուցիչ բարդություն է ստեղծում ժառանգության գործընթացում:

Հաջորդ **խնդիրը ֆինանսական բնույթի** է: Ժառանգության գործերով նոտարական ծառայությունների համար սահմանված վճարները, դատական կարգով ժառանգության գործերով սահմանված պետական տուրքերը լրացուցիչ բեռ են դառնում բռնի տեղահանված անձանց համար: Տեղահանման հետևանքով սոցիալ-տնտեսական անկայուն վիճակում գտնվող բազմաթիվ անձինք ի վիճակի չեն վճարել այս ծախսերը, ինչի պատճառով նրանց ժառանգության իրավունքների իրացումը դառնում է գրեթե անհնարին:

Վերոնշյալ խնդիրների համապարփակ լուծման համար անհրաժեշտ են մի շարք ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներ: Հաշվի առնելով բռնի տեղահանված անձանց ժառանգության գործերի քննության առանձնահատկությունները՝ հարկավոր է փաստաթղթերի բացակայության հարցը լուծելու նպատակով սահմանել այլընտրանքային փաստաթղթերի և ապացույցների ընդունման հստակ ցանկ և ընթացակարգ և ըստ դրա մշակել մեթոդական ուղեցույցներ նոտարների համար: Ժառանգության ընդունման վեցամսյա ժամկետի խնդրի համար անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել բռնի տեղահանված անձանց համար ժառանգության ընդունման ժամկետի երկարաձգման հնարավորություն կամ օրենսդրորեն զարգացնել ԱՆ-ի նախաձեռնությունը՝ թույլատրելով ժառանգության ընդունման դիմումների ներկայացումը բնակության վայրի նոտարին: Ժառանգության բացման վայրի հարցով օրենսդրորեն հնարավորություն ընձեռել ժառանգության իրավունքի վկայագրերի ստացման նույն նոտարից, որին ներկայացվել է ժառանգության ընդունման դիմումը: Ժառանգական զանգվածի որոշման խնդրի առնչությամբ ստեղծել հատուկ ընթացակարգ «Արցախ» բանկում և այլ բանկերում գտնվող միջոցների նկատմամբ ժառանգության իրավունքի ձևակերպման համար: Կարևոր է նաև դիտարկել նոտարների կողմից մատուցվող ծառայությունների համար կամ դատական կարգով ժառանգության գործերով սահմանված պետական տուրքերից ազատման կամ զգալի զեղչերի սահմանման հնարավորությունը:

#### **6.4. Զինվորական հաշվառման փաստաթղթեր**

Բռնի տեղահանված անձինք բախվում են **զինվորական հաշվառման փաստաթղթերի վերականգնման էական խնդիրների** հետ: Զինվորական գրքույկների և հաշվառման փաստաթղթերի բացակայությունը խոչընդոտում է զինվորական ծառայության փաստը հաստատելուն, ինչը կարող է խնդիրներ առաջացնել ինչպես աշխատանքի ընդունվելիս, այնպես էլ այլ վարչական գործընթացներում: Հատկապես բարդ է իրավիճակը այն անձանց համար, ովքեր ունեն զինվորական ծառայության ընթացքում ստացած վնասվածքներ կամ հաշմանդամություն, և ում համար փաստաթղթերի բացակայությունը խոչընդոտում է համապատասխան արտոնություններից օգտվելու հնարավորությանը:

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ ՊՆ) պաշտոնական դիրքորոշմամբ՝ զինվորական փաստաթղթերի վերականգնման գործընթացը ներկայումս համարվում է համակարգված և իրականացվում է հետևյալ կերպ. այն անձինք, ովքեր վերականգնվում են զինվորական ծառայության, անձնական գործերը (զինվորական հաշվառման փաստաթղթերը) վերականգնվում են ՀՀ ՊՆ կադրային քաղաքականության գլխավոր վարչության կողմից: Իսկ նրանք, ովքեր հաշվառվում են պահեստագործում, անձնական գործերը վերականգնվում են ՀՀ հանրապետական զինվորական կոմիսարիատի կողմից:

Միևնույն ժամանակ, գործնականում շարունակվում են բարձրաձայնվել խնդիրներ, որոնք վերաբերում են վերականգնման գործընթացի հասանելիությանը, հստակությանը և արդյունավետությանը: Չնայած ՊՆ-ի կողմից ներկայացված պաշտոնական ձևակերպումներին, փաստացի անորոշ է մնում, թե ինչ ընթացակարգով և ինչ ապացույցների հիման վրա կարող է վերականգնվել զինվորական ծառայությունը՝ այն դեպքերում, երբ անձը չունի փաստաթղթեր կամ դրանց հասանելիություն: Բացի այդ, հնարավոր է, որ խնդիրն ամբողջությամբ պայմանավորված չէ վերականգնման համակարգի բացակայությամբ, այլ նաև իրազեկման պակասով, երբ շահառուները պարզապես տեղեկացված չեն վերականգնման հնարավոր մեխանիզմների մասին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նպատակահարմար է քննարկել՝ զինվորական փաստաթղթերի վերականգնման ընթացակարգերի վերաբերյալ պարզ և հասանելի տեղեկատվության տրամադրումը շահառու անձանց, հնարավոր հավելյալ միջոցառումների կիրառումը՝ որոնք թույլ կտան անհատական մոտեցմամբ դիտարկել փաստաթղթերի բացակայության պատճառները և գտնել վերականգնման համապատասխան ուղիներ, այդ

թվում՝ ծառայության փաստը հաստատելու նպատակով այլընտրանքային ապացույցների կիրառման հնարավորության դիտարկմամբ:

## **7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

### **7.1. Անվճար կրթություն. ՀՀ կառավարության N 1762-Լ որոշում և N 2291-Լ որոշում**

#### **7.1.1. Իրավական կարգավորումների ամփոփ նկարագիրը.**

ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կրթության շարունակականության ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը սահմանել է հետևյալ իրավական ակտերը:

ՀՀ կառավարության 2023թ. հոկտեմբերի 12-ի N 1762-Լ որոշմամբ հաստատվել են 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը և կրթաթոշակի առավելագույն չափերը: Սկզբնապես այս որոշման կարգավորումները գործել են միայն 2023-2024 ուսումնական տարվա համար, սակայն ՀՀ կառավարության 2024թ. սեպտեմբերի 26-ի N 1521-Լ որոշմամբ կատարված փոփոխությունների արդյունքում սահմանվել է, որ կրթաթոշակները տրամադրվում են 2023-2024, 2024-2025, 2025-2026, 2026-2027 և 2027-2028 ուսումնական տարիների համար մինչև տվյալ կրթական մակարդակում ուսումնառության ավարտը: Ավելացվել է նաև ակադեմիական առաջադիմության պահանջ՝ 2025-2026, 2026-2027 և 2027-2028 ուսումնական տարիների համար կրթաթոշակը տրվում է նախորդ ուսումնական տարվա միջին որակական գնահատականի 75.00 տոկոսը հաղթահարելու դեպքում: Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների համար սահմանվել է, որ կրթաթոշակը տրվում է նախորդ ուսումնական տարվա արդյունքում 50 տոկոսից ոչ պակաս «գերազանց» և «լավ» գնահատականներ ունենալու դեպքում:

ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 21-ի N 2291-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում մինչև 2023թ. սեպտեմբերի 19-ն ընդգրկված ԼՂ-ի սովորողների ուսման վարձի փոխհատուցման տրամադրման կարգը: Սկզբնապես այս որոշման կարգավորումները գործել են միայն 2023-2024 ուսումնական տարվա համար: ՀՀ կառավարության 2024թ. սեպտեմբերի 26-ի N 1513-Լ

որոշմամբ կատարված փոփոխությունների արդյունքում՝ սահմանվել է, որ ուսման վարձի փոխհատուցումը տրամադրվում է 2023-2024, 2024-2025, 2025-2026, 2026-2027 և 2027-2028 ուսումնական տարիների համար մինչև տվյալ կրթական մակարդակում ուսումնառության ավարտը: Կարգավորումները տարածվել են նաև 2024-2025 ուսումնական տարում նախնական, միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցմամբ առաջին կուրս ընդունված բռնի տեղահանված ընտանիքների սովորողների վրա: Սահմանվել են ուսման վարձի փոխհատուցման տարբերակված չափեր և պայմաններ ըստ ուսումնական տարիների: 2023-2024 ուսումնական տարվա և 2024-2025 ուսումնական տարվա առաջին կուրսեցիների համար՝ 100% փոխհատուցում առաջին կիսամյակում, իսկ հետագայում՝ պայմանավորված միջին որակական գնահատականով (այսուհետ՝ ՄՈԳ)-ով: 2025-2026 ուսումնական տարվանից սկսած սահմանվել է ՄՈԳ-ի ավելի բարձր շեմ՝ 75.00%, իսկ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների համար՝ 50% «գերազանց» և «լավ» գնահատականներ:

#### **7.1.2. Իրավական ակտերի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրները:**

Սկզբնապես ՀՀ կառավարության ընդունած որոշումներով ուսման վարձերի փոխհատուցման և կրթաթոշակների համակարգերը գործում էին միայն 2023-2024 ուսումնական տարվա համար: Իրավապաշտպան կազմակերպությունների, այդ թվում ԻՀԱ-ի բարձրաձայնումից հետո, կառավարության 2024թ. սեպտեմբերի 26-ի որոշումներով այս կարգավորումները երկարաձգվել են մինչև 2027-2028 ուսումնական տարին, ինչպես նաև տարածվել են 2024-2025 ուսումնական տարում առաջին կուրս ընդունված ուսանողների վրա:

Մակայն, չնայած այս դրական փոփոխություններին, 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո ԼԴ-ից բռնի տեղահանված անձանց համար, ովքեր կընդունվեն կրթական հաստատություններ 2025 թվականին և հետագա տարիներին, դեռևս չկան հստակ կարգավորումներ: Հաշվի առնելով տեղահանվածների ֆինանսական խոցելի վիճակը, առաջարկվում է մոտակա մի քանի տարիներին ընդունվող տեղահանված անձանց վրա ևս տարածել այս

կարգավորումները՝ ապահովելով նրանց համար կրթության հասանելիությունը և աջակցելով նրանց ինտեգրմանը:

## **8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**

### **8.1. Անվճար բժշկական օգնություն. ՀՀ կառավարության N 318-Ն որոշում**

#### **8.1.1. Իրավական կարգավորումների ամփոփ նկարագիրը.**

Ներկայումս, ԼՂ-ից բռնի տեղահանված անձինք, այդ թվում՝ մինչև 18 տարեկան երեխաները, օգտվում են պետության կողմից երաշխավորված համապարփակ առողջապահական ծառայություններից, որոնք ներառում են ինչպես բժշկական օգնությունն ու սպասարկումը, այնպես էլ դեղորայքային ապահովումը: Մասնավորապես՝

- Բռնի տեղահանված անձանց բժշկական օգնությունն և սպասարկումն իրականացվում է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով: Վերջիններս սահմանված կարգով գրանցվում են առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում, որտեղ ստանում են Առողջապահության նախարարի 13.06.2022թ. թիվ 40-Ն հրամանով հաստատված ծավալներով ԱԱՊ ծառայությունները (ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն որոշում, Հավելված N 1):
- Բռնի տեղահանված անձինք օգտվում են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից (ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի N 318-Ն որոշում, Հավելված N 3):
- Բռնի տեղահանված անձանց դեղերը հատկացվում են դրանց արժեքի լրիվ փոխհատուցմամբ: Օգտվում են նաև Առողջապահության նախարարության անունով մարդասիրական օգնությամբ ստացված և բաշխված, ինչպես նաև անմիջապես առողջապահական կազմակերպությունների անունով այլ մարդասիրական խողովակներով ստացված դեղերի անվճար տրամադրման իրավունքից՝ ըստ բժշկական ցուցումների (ՀՀ կառավարության 2019թ. մայիսի 30-ի N 642-Ն որոշում):

- ԼՂ-ից բռնի տեղահանված, ժամանակավոր պաշտպանության տակ վերցված, փախստական ճանաչված կանայք դարձել են անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման շահառուներ, որի շրջանակում նրանք կարող են օգտվել պետության օժանդակությամբ իրականացվող անպտղության հաղթահարման ծրագրից՝ արհեստական բեղմնավորման միջոցով (ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 27-ի N 568-Ն որոշում):

ՀՀ կառավարության թիվ 318-Ն որոշման Հավելված 4-ով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար բժշկական կազմակերպություններ ուղեգրման և հերթագրման կարգ»-ի համաձայն, պացիենտների հերթագրումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային հերթագրումը կատարվում է ըստ դիմելիության ժամկետների, էլեկտրոնային ուղեգրի հիման վրա: Հերթագրման ենթակա չեն Հավելվածի 11-րդ կետով սահմանված ՀՀ կառավարության կամ առողջապահության նախարարության կողմից հաստատված հիվանդությունների և վիճակների ցանկերին համապատասխան մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները և Հավելվածի 12-րդ կետով սահմանված շահառուներին մատուցվող ծառայությունները:

### **8.1.2. Իրավական ակտերի կարգավորման և կիրառման հետ կապված խնդիրներ:**

Այդուհանդերձ, բռնի տեղահանված անձանց առողջապահական ծառայությունների մատուցման գործընթացում առկա են մի շարք մտահոգիչ հարցեր: **Առաջնային է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար անվճար բժշկական օգնության շարունակականության ապահովման խնդիրը:** Հրատապ կարգավորում է պահանջում նաև պետպատվերի շրջանակներում բժշկական զննությունների հերթերի հարցը, քանի որ ներկայումս անհետաձգելի դեպքերում անգամ հիվանդները ստիպված են երկար սպասել: Կարևոր խնդիր է նաև պետպատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունների հասանելիությունը բոլոր բժշկական հաստատություններում:

Անհրաժեշտ է մշակել հստակ մեխանիզմներ անվճար բժշկական օգնության շարունակականության երաշխավորման համար՝ սահմանելով երկարաժամկետ լուծումներ:

Պետպատվերի շրջանակներում բժշկական գննությունների հերթերի խնդրի լուծման համար անհրաժեշտ է ներդնել արդյունավետ համակարգ, որը կապահովի անհետաձգելի դեպքերում, բժշկի ցուցումով, արագ սպասարկում: Բոլոր բժշկական հաստատություններում պետպատվերի շրջանակներում նախատեսված ծառայությունների հասանելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է ընդլայնել պետպատվերով աշխատող հաստատությունների ցանկը և վերահսկել դրանց գործունեությունը:

## **9. ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

### **9.1. Որոշումների կայացման գործընթացում մասնակցության բացակայություն**

Բռնի տեղահանված արցախցիների մասնակցության բացակայությունը որոշումների կայացման գործընթացում հանգեցրել է անհամապատասխան ծրագրերի մշակման: Սա նշանակում է, որ կարևորագույն աջակցության ծրագրերը հաճախ չեն արտացոլում շահառուների իրական կարիքներն ու առաջնահերթությունները, ինչը նվազեցնում է դրանց արդյունավետությունը և նպատակայնությունը:

Անհրաժեշտ է ստեղծել շահառուների հետ խորհրդակցության և նրանց մասնակցության ապահովման արդյունավետ մեխանիզմներ՝ ծրագրերի մշակման և իրականացման բոլոր փուլերում: Սա կնպաստի աջակցության ծրագրերի թիրախավորվածության բարձրացմանը և կապահովի դրանց համապատասխանությունը շահառուների իրական կարիքներին:

### **9.2. Ընթացիկ գույքագրման բացակայություն**

Խնդիրների ընթացիկ համակարգային գույքագրման բացակայությունը խոչընդոտում է աջակցության ծրագրերի արդյունավետ պլանավորմանն ու իրականացմանը: Սա հանգեցնում է աջակցության ծրագրերի ոչ արդյունավետ պլանավորման և իրականացման, ինչպես նաև խոչընդոտում է առկա ռեսուրսների նպատակային օգտագործմանը:

Անհրաժեշտ է ներդնել խնդիրների համակարգային գույքագրման և մշտադիտարկման միասնական մեխանիզմ: Սա ենթադրում է տվյալների հավաքագրման, վերլուծության և



թարմացման շարունակական գործընթաց, որը թույլ կտա ժամանակին բացահայտել և արձագանքել առաջացող խնդիրներին:

### **9.3. Իրազեկման և ուղղորդման համակարգի բացեր**

Ներկա իրավիճակում բռնի տեղահանված արցախցիների աջակցության համակարգում առկա է ծառայությունների մատուցման և կառավարման ցրվածություն: Շահառուները ստիպված են առանձին-առանձին դիմել բազմաթիվ պետական մարմիններ և կազմակերպություններ՝ տարբեր ծառայություններից օգտվելու համար: Մա հանգեցնում է վարչարարական բեռի ավելացման շահառուների համար, աջակցության տրամադրման անհամաչափության, երբ նույն ընտանիքի անդամները նույնատիպ աջակցություն ստանում են տարբեր աղբյուրներից և տարբեր ժամկետներում: Միաժամանակ նկատվում է ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխում և օգտագործում, տեղեկատվության ցրվածություն տարբեր մարմինների միջև, ինչպես նաև շահառուների համար իրազեկվածության ցածր մակարդակ առկա հնարավորությունների մասին:

Որպես այս խնդիրների լուծման արդյունավետ մեխանիզմ առաջարկվում է «մեկ պատուհանի» սկզբունքի ներդրումը, որը թույլ կտա միասնականացնել ծառայությունների մատուցումը, ապահովել տեղեկատվության արդյունավետ փոխանակումը, բարձրացնել ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և պարզեցնել շահառուների համար ծառայություններից օգտվելու գործընթացը:

### III. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### 1. Իրավական կարգավիճակ:

- 1.1. Ապահովել ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայականի տրամադրման գործընթացներում վարչական մարմնի կողմից միատեսակ վարչարարության իրականացումը և իրավական ակտի կիրառման գործընթացի համակարգված մշտադիտարկումը:
- 1.2. Վերանայել պետական աջակցության ծրագրերով շահառուների համար **որպես նախապայման ՀՀ քաղաքացիության ընդունման պարտադիր պահանջի սահմանման քաղաքականությունը՝** փախստականի՝ ծագման երկիր վերադառնալու իրավունքի վրա հնարավոր սահմանափակող հնարավոր ազդեցությունը բացառելու նպատակով:

#### 2. Բնակարանային ապահովում:

- 2.1. Վերանայել ՀՀ կառավարության N 169-Լ որոշման կարգավորումները՝ բարձրացնելու ԼՂ առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրի արդյունավետությունն ու երաշխավորելու վերջիններիս իրական կարիքների բավարարումը
  - 2.1.1. Վերանայել Երևանում բնակտարածք ձեռք բերելու տարածքային սահմանափակումները:
  - 2.1.2. Վերանայել աջակցության չափը՝ հաշվի առնելով շուկայում առկա գները:
  - 2.1.3. Վերացնել կանխավճարի պարտադիր պահանջը:
  - 2.1.4. Ապահովել ժամկետանց վարկային պարտավորություններ ունեցող շահառուներին բնակտարածքի ձեռքբերման հավաստագրի տրամադրումը՝ ԿԲ ներքին իրավական ակտի համաձայն:
  - 2.1.5. Ճկուն դարձնել հատկացվող գումարի օգտագործման սահմանափակումները:
- 2.2. Վերանայել ՀՀ կառավարության N 710-Լ որոշման կարգավորումները՝ բարձրացնելու ԼՂ բռնի տեղահանված անձանց բնակարանային ապահովման

ծրագրի արդյունավետությունն ու երաշխավորելու վերջիններիս իրական կարիքների բավարարումը:

- 2.2.1. Ընդլայնել և հստակեցնել շահառուների շրջանակը,
- 2.2.2. Քաղաքացիության ընդունման պարտադիր պահանջը տեղափոխել ծրագրի վերջնական փուլ՝ երբ անձն արդեն կատարած կլինի բնակտարածքի հետ կապված բոլոր պայմանագրային պարտավորությունները պետության նկատմամբ:
- 2.2.3. Վերանայել ՀՀ-ից բացակայության դեպքում աջակցության դադարեցման պայմանները:
- 2.2.4. Ներդնել նախկինում մերժված դիմումների հատուկ վերանայման հնարավորություն և պարզեցված ընթացակարգեր:
- 2.2.5. Վերանայել աջակցության չափը՝ սահմանելով հաշվարկման նոր մեթոդաբանություն, որը հիմնված կլինի շուկայական միջին գների վրա և կներառի գնաճի գործակիցը:
- 2.2.6. Վերանայել աջակցության հաշվարկման մեխանիզմում ընտանիքի կազմը և սոցիալական կարգավիճակը՝ ստեղծելով լրացուցիչ պայմաններ հատուկ կարիքներ ունեցող անձանց (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց) համար,
- 2.2.7. Վերանայել բնակության վայրի ընտրության չափանիշները՝ դրանք դարձնելով առավել ճկուն և սահմանելով հավասար աջակցության չափ՝ անկախ բնակտարածքի գտնվելու վայրից,
- 2.2.8. Վերանայել կառուցապատման հետ կապված սահմանափակումները՝ հնարավորություն տալով շահառուներին մասնակցել բնակտարածքի նախագծման և վերանորոգման աշխատանքներին,
- 2.2.9. Ապահովել պետական միջամտություն տոկոսադրույքների իջեցման հարցում:
- 2.2.10. Ապահովել ժամկետանց վարկային պարտավորություններ ունեցող շահառուներին բնակտարածքի ձեռքբերման հավաստագրի տրամադրումը՝ ԿԲ ներքին իրավական ակտի համաձայն:

### 3. Սոցիալական աջակցություն

3.1. Վերանայել ՀՀ կառավարության N 1675-Լ որոշման կարգավորումները՝ ապահովելու ԼՂ բռնի տեղահանված անձանց միանվագ դրամական աջակցության ծրագրի թիրախային և արդյունավետ բաշխում և նվազեցնելու հնարավոր չարաշահումների ռիսկը:

3.1.1. Վերանայել շահառուների ճանաչման չափանիշները՝ առաջնորդվելով ոչ թե ձևական պահանջներով, այլ անձանց փաստացի կարգավիճակով և կարիքներով: Ըստ այդմ, փոփոխություններ կատարել որոշման N 1 Հավելվածի 1-ին և 1.1-ին կետերում և ընդլայնել, համապատասխանաբար, բռնի տեղահանված և բռնի տեղահանված համարվող անձանց շրջանակը՝ սահմանելով հստակ չափորոշիչներ, մասնավորապես՝ ԱՀ տարածքից դուրս գալու և շրջափակման սկսման միջև ընկած ժամանակահատվածի առավելագույն սահմանաչափ՝ անձի՝ ԱՀ վերադառնալու մտադրությունը օբյեկտիվորեն գնահատելու և ժամանակավոր բացակայությունը մշտական տեղափոխումից տարանջատելու նպատակով:

3.1.2. Ուժը կորցրած ճանաչել միանվագ դրամական աջակցություն նշանակելու և վճարելու համար դիմում ներկայացնելու ժամկետի սահմանափակումը:

3.2. Վերանայել ՀՀ կառավարության N 1763-Լ և N 1833-Լ որոշումների կարգավորումները՝ ապահովելու ԼՂ բռնի տեղահանված անձանց կեցության և այլ ծախսերի աջակցության ծրագրի առավել արդարացի և ներառական բաշխում՝ հաշվի առնելով բոլոր փաստացի տեղահանված անձանց իրական կարիքները:

3.2.1. Ընդլայնել շահառուների շրջանակը և ստեղծել մեխանիզմներ, որոնք թույլ կտան դիտարկել նաև ՕՇ ցուցակներում չընդգրկված անձանց դիմումները՝ հիմք ընդունելով նրանց կողմից ներկայացվող փաստական ապացույցները:

3.2.2. Ընդլայնել բռնի տեղահանված համարվող անձանց շահառուների շրջանակը՝ ներառելով նաև մինչև շրջափակումը ԱՀ-ից դուրս գտնված անձանց, ովքեր չէին կարող կանխատեսել վերադարձի անհնարիությունը, սակայն ներառված չեն N 1675-Լ որոշման շահառուների ցուցակներում:

Այդ նպատակով դիտարկել հետևյալ սահմանման ընդունման նպատակահարմությունը. «ՀՀ կառավարության N 1763-Լ որոշմամբ հաստատված Հավելված N 1-ի 1-ին կետի համաձայն՝ *«Մույն միջոցառման նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 1675-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում միանվագ դրամական սոցիալական աջակցության շահառու հանդիսացող և (կամ) 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո տեղահանված, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում փաստացի բնակվող (մինչև շրջափակումը Արցախի Հանրապետությունից դուրս գտնվող) ու 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ հանդիսացող անձանց (այսուհետ՝ շահառուներ):»* Սահմանել հստակ չափորոշիչներ, մասնավորապես՝ ԱՀ տարածքից դուրս գալու և շրջափակման սկսման միջև ընկած ժամանակահատվածի առավելագույն սահմանաչափ:

3.2.3. Ընդլայնել շահառուների շրջանակը՝ ներառելով 2024 թվականի հուլիսի 1-ի դրությամբ N 169-Լ որոշմամբ հավաստագիր ստացած բռնի տեղահանված անձանց, ովքեր օբյեկտիվ պատճառներով հնարավորություն չեն ունեցել ծրագրի շրջանակներում ձեռք բերել սեփականության իրավունքով բնակտարածք՝ սահմանելով ժամանակատված, որի ընթացքում նշյալ անձինք հնարավորություն կունենան ստանալ կեցության և այլ ծախսերը հոգալու համար տրամադրվող սոցիալական աջակցության գումարները և սահմանված ժամկետում N 169-Լ որոշմամբ ստացված հավաստագիրը չիրացնելու դեպքում կզրկվեն աջակցությունից:

3.2.4. N 1833-Լ որոշմամբ նախատեսված սոցիալական աջակցության ծրագիրը շարունակել կիրառել նախկին սկզբունքներով՝ պահպանելով աջակցության ամբողջ ծավալը և շահառուների շրջանակը՝ մինչև N 1763-Լ ծրագրի բոլոր շահառուների համար մշտական բնակարանային լուծումներ գտնելը՝ ապահովելով աջակցության անընդհատությունը և ուղղակիորեն

կապելով ծրագրի ավարտը շահառուների բնակարանային ապահովման հետ, այլ ոչ թե նախասահմանված ժամկետի հետ: Նշված տարբերակի սկզբունքայնորեն անընդունելի է համարվելու պարագայում, ընդլայնել N 1833-Լ որոշման շահառուների կազմը՝ առնվազն ներառելով հետևյալ խոցելի խմբերին պատկանող անձանց՝ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք, հաշմանդամություն ունեցող կամ աշխատելու հնարավորություն չունեցող՝ ֆունկցիոնալության սահմանափակման խորը կամ ծանր աստիճան ունեցող անձանց խնամողներ, 55 տարեկանից բարձր անձինք, 63 տարեկանը չգերազանցող որդեկորույս ծնողներ, Անչափահաս երեխաներ խնամող սոցիալապես անապահով միայնակ ծնողներ:

3.2.5. Վերացնել ՀՀ կառավարության N 1763-Լ որոշման Հավելված N1-ի 4-րդ կետի և Հավելված N2-ի 22-րդ կետերի միջև հակասությունը, որպեսզի անձամբ սեփականության իրավունքով բնակտարածք չունեցող անձինք ստանան 50,000 դրամի չափով աջակցություն՝ անկախ նրանց ամուսնու կամ անչափահաս երեխաների անվամբ գրանցված սեփականության իրավունքից:

3.2.6. Վերանայել ՀՀ կառավարության N 1763-Լ և N 1833-Լ որոշումների դրույթները՝ վերացնելով սեփականության իրավունքով 20 քմ-ից ավելի բնակտարածք ունեցող անձանց սոցիալական աջակցություն ստանալու իրավունքից զրկելու սահմանափակումները, և ներդնել բնակտարածքի հաշվարկման նոր մեխանիզմ, որը հիմնված կլինի մեկ շնչի հաշվով բնակելի մակերեսի վրա՝ ապահովելով սոցիալական արդարության սկզբունքի իրացումը:

3.2.7. Ներդնել ՄՄԾ-ի կողմից վարչական ակտերի ընդունման ժամկետների պահպանման մշտադիտարկման մեխանիզմ՝ կանխելով օրենքով սահմանված ժամկետների խախտումները:

3.3. Վերանայել ՀՀ կառավարության N 1957-Լ որոշման կարգավորումները՝ երկարաձգելով աջակցության տրամադրման ժամկետը առնվազն մինչև 2025 թվականի հունիսի 30-ը՝ միևնույն ժամանակ կատարելով համալիր կարիքների պարբերական գնահատում, կարիքների գնահատման արդյունքում ներդնել

փուլային անցման մոդել, որով աջակցությունը աստիճանաբար կտրանսֆորմացվի երկարաժամկետ լուծումների՝ հաշվի առնելով զբաղվածության և ինքնազբաղվածության խթանման ծրագրերը:

3.4. Մշակել ԼՂ բռնի տեղահանված անձանց **աշխատանքային ստաժի հաշվարկման և կենսաթոշակի նշանակման պարզեցված մեխանիզմներ**, որոնք հնարավորություն կտան հաշվարկել աշխատանքային գրքույկում հաստատված ողջ ստաժը էլեկտրոնային բազաներում տվյալների բացակայության դեպքում և փոխհատուցել անցած ամիսների ընթացքում թերի վճարված կենսաթոշակի գումարները: Դիտարկել աշխատանքային ստաժի հաշվարկման և կենսաթոշակի նշանակման հարցերով հատուկ հանձնախմբի ձևավորվման նպատակահարմարությունը:

3.5. Վերանայել **պետական նպաստների** տրամադրման իրավակարգավորումները և ապահովել գործընթացի պատշաճ իրականացում

3.5.1. Հստակեցնել ԱՀ-ում ծնված **երրորդ և հաջորդող երեխաների ծննդյան** կապակցությամբ տրամադրվող գումարների վճարման մեխանիզմները:

3.5.2. Բարելավել **թաղման նպաստների** դիմումների ընդունման և մշակման գործընթացը և ապահովել պատշաճ վարչարարության իրականացումը:

#### **4. Զբաղվածություն:**

4.1. Աշխատանքային ինտեգրման աջակցության և մասնագիտական վերապատրաստման վերաիմաստավորման նպատակով ներդնել ճկուն մեխանիզմներ, որոնք կնվազեցնեն տարիքային խտրականությունը, կստեղծեն հավասար մրցակցային միջավայր և կապահովեն տեղահանված անձանց՝ աշխատուժի ներկա կարիքներին համապատասխան հմտությունների ձեռքբերումը՝ անկախ նրանց տարիքից և կրթական հիմքից, օրինակ՝ գործատուների համար խրախուսական ծրագրերի և աշխատաշուկայի արդի պահանջների և բռնի տեղահանված անձանց կարիքների գնահատման խորը վերլուծության վրա հիմնված վերապատրաստման մոդուլների միջոցով:

#### **5. Ֆինանսական պահանջներ և հատուցումներ:**

5.1. Ելնելով միևնույն կատեգորիայի անձանց նկատմամբ միատեսակ մոտեցում ցուցաբերելու սկզբունքից և հաշվի առնելով ստեղծված ծանր սոցիալական դրությունը՝ մշակել նոր մեխանիզմներ, որոնցով

5.1.1. Կարգավորել 2020 թվականի սեպտեմբերի 27-ի ԱՀ դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով **նյութական վնաս կրած և փոխհատուցում չստացած անձանց հարցը,**

5.1.2. ԱՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված և դեռևս չփոխհատուցված **բժշկական ծախսերի փոխհատուցման հարցը** և

5.1.3. ԱՀ ներդրումային հիմնադրամի կողմից ստանձնած և չկատարված՝ **Արցախի բնակիչների՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ի պատերազմը վարկային պարտավորությունների հարցը:**

## 6. Իրավաբանական փաստերի հաստատում:

6.1. Մշակել օրենսդրական հստակ մեխանիզմներ և իրավական կառուցակարգեր, որոնք կապահովեն **Արցախի դատական համակարգի կողմից կայացված ակտերի ճանաչումը և չավարտված վարույթների շարունակականությունը ՀՀ իրավական համակարգում՝** պահպանելով մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության իրականացման հիմնարար սկզբունքները, ինչպես նաև վերանայել պետությունների գանձման քաղաքականությունը՝ նախատեսելով արտոնություններ բռնի տեղահանված անձանց համար:

6.2. Հաշվի առնելով բռնի տեղահանված անձանց հատուկ իրավիճակը, ներդնել **ՔԿԱԳ փաստաթղթերի վերականգնման պարզեցված ընթացակարգեր նշյալ կատեգորիայի անձանց համար:**

6.2.1. Սահմանել այլընտրանքային փաստաթղթերի և ապացույցների ցանկ, որոնք կարող են ընդունվել փաստաթղթերի վերականգնման համար՝ հաշվի առնելով բռնի տեղահանման պատճառով առաջացած սահմանափակումները:



- 6.2.2. Վերանայել պետությունների գանձման քաղաքականությունը՝ նախատեսելով արտոնություններ բռնի տեղահանված անձանց համար: Սա կարող է ներառել պետություններից ազատում կամ զգալի զեղչեր՝ փաստաթղթերի վերականգնման համար:
- 6.2.3. Սահմանելով արագացված ընթացակարգեր հրատապ դեպքերի համար, օրինակ՝ երբ փաստաթղթերի բացակայությունը խոչընդոտում է քաղաքացիության ձեռքբերմանը:
- 6.2.4. Էապես բարելավել ՔԿԱԳ մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացը՝ հատուկ ուշադրություն դարձնելով դիմողների պատշաճ իրազեկմանը և ուղղորդմանը, մասնավորապես՝ անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական շրջանակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և համապատասխան խորհրդատվության ապահովման գործում:
- 6.3. Վերանայել **իրավաբանական փաստերի նոտարական հաստատման գործընթացը:**
- 6.3.1. Մշակել հատուկ ուղեցույցներ նոտարների համար՝ Արցախից տեղահանված անձանց գործերի վարման և իրավաբանական փաստերի հաստատման վերաբերյալ,
- 6.3.2. Ապահովել նոտարների մասնագիտական վերապատրաստումը՝ նման գործերի քննության առանձնահատկությունների վերաբերյալ:
- 6.4. Համակարգային լուծումներ տալ **գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի վերականգնման** գործընթացին:
- 6.4.1. Ներդնել պարզեցված ընթացակարգեր գույքային իրավունքների վերականգնման համար և սահմանել փաստաթղթերի վերականգնման հատուկ մեխանիզմներ և այլընտրանքային ապացույցների ընդունման հնարավորություն՝ հաշվի առնելով առկա փաստաթղթերի հնարավոր բացակայությունը կամ վնասվածությունը:

- 6.4.2. Ներդնել արագացված ընթացակարգ հրատապ դեպքերի համար, երբ բռնի տեղահանվածները ունեն անհետաձգելի կարիքներ՝ կապված իրենց գույքային իրավունքների հաստատման հետ:
- 6.4.3. Իրականացնել ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակիցների վերապատրաստում՝ նոր համակարգի և ընթացակարգերի վերաբերյալ՝ թափանցիկության և արդյունավետության սկզբունքների վրա վարչարարության պատշաճ իրականացման նպատակներով:

**6.5. Ներդնել ժառանգության իրավունքի վկայագրերի տրամադրման հատուկ ընթացակարգեր** նշյալ կատեգորիայի անձանց համար համար:

- 6.5.1. Հաշվի առնելով բռնի տեղահանված անձանց ժառանգության գործերի քննության առանձնահատկությունները՝ փաստաթղթերի բացակայության հարցը լուծելու նպատակով սահմանել այլընտրանքային փաստաթղթերի և ապացույցների ընդունման հստակ ցանկ և ընթացակարգ և ըստ դրա մշակել մեթոդական ուղեցույցներ նոտարների համար:
- 6.5.2. Ժառանգության ընդունման վեցամսյա ժամկետի խնդրի լուծման նպատակով օրենսդրորեն ամրագրել բռնի տեղահանված անձանց համար ժառանգության ընդունման ժամկետի երկարաձգման հնարավորություն կամ օրենսդրորեն զարգացնել ԱՆ-ի նախաձեռնությունը՝ թույլատրելով ժառանգության ընդունման դիմումների ներկայացումը բնակության վայրի նոտարին:
- 6.5.3. Ժառանգության բացման վայրի հարցի լուծման նպատակով օրենսդրորեն հնարավորություն ընձեռել ժառանգության իրավունքի վկայագրերի ստացման նույն նոտարից, որին ներկայացվել է ժառանգության ընդունման դիմումը:
- 6.5.4. Ժառանգական զանգվածի որոշման խնդրի առնչությամբ ստեղծել հատուկ ընթացակարգ «Արցախ» բանկում և այլ բանկերում գտնվող միջոցների նկատմամբ ժառանգության իրավունքի ձևակերպման համար:

6.5.5. Դիտարկել նոտարների կողմից մատուցվող ծառայությունների համար կամ դատական կարգով ժառանգության գործերով սահմանված պետական տուրքերից ազատման կամ զգալի զեղչերի սահմանման հնարավորությունը:

6.6. Ստեղծել պարզեցված մեխանիզմ **զինվորական հաշվառման փաստաթղթերի վերականգնման համար**՝ հաշվի առնելով բռնի տեղահանման հետևանքով առաջացած առանձնահատուկ իրավիճակը:

6.6.1. Իրականացնել թիրախային իրազեկման աշխատանքներ՝ ուղղված զինվորական փաստաթղթերի վերականգնման ընթացակարգերի վերաբերյալ շահառու անձանց պարզ և հասանելի տեղեկատվության տրամադրմանը,

6.6.2. Գնահատել հավելյալ միջոցառումների կիրառման անհրաժեշտությունը՝ որոնք թույլ կտան անհատական մոտեցմամբ ուսումնասիրել փաստաթղթերի բացակայության պատճառները և մշակել վերականգնման համապատասխան ուղիներ, այդ թվում՝ ծառայության փաստը հաստատելու նպատակով այլընտրանքային ապացույցների ընդունման հնարավորության ներդրմամբ:

## 7. Կրթություն:

7.1. Տարածել ՀՀ կառավարության N 2291-Լ որոշման կարգավորումները 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց նկատմամբ, ովքեր կընդունվեն կրթական հաստատություններ 2025 թվականին և հետագա տարիներին՝ ապահովելով նրանց համար կրթության հասանելիությունը և աջակցելով նրանց ինտեգրմանը:

## 8. Առողջապահություն:

8.1. Մշակել երկարաժամկետ և կայուն մեխանիզմներ՝ ապահովելու անվճար բժշկական օգնության արդյունավետ իրականացումը:

- 8.1.1. Մշակել հստակ մեխանիզմներ անվճար բժշկական օգնության շարունակականության երաշխավորման համար՝ սահմանելով երկարաժամկետ լուծումներ:
- 8.1.2. Պետպատվերի շրջանակներում բժշկական զննությունների հերթերի խնդրի լուծման նպատակով ներդնել արդյունավետ համակարգ, որը կապահովի անհետաձգելի դեպքերում, բժշկի ցուցումով, արագ սպասարկում:
- 8.1.3. Բոլոր բժշկական հաստատություններում պետպատվերի շրջանակներում նախատեսված ծառայությունների հասանելիությունն ապահովելու նպատակով ընդլայնել պետպատվերով աշխատող հաստատությունների ցանկը և վերահսկել դրանց գործունեությունը:

## 9. Համակարգային խնդիրներ:

- 9.1. Ստեղծել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց հետ խորհրդակցության և նրանց մասնակցության ապահովման արդյունավետ մեխանիզմներ՝ վերջիններիս ուղղված որոշումների կայացման և իրականացման բոլոր փուլերում՝ աջակցության ծրագրերի թիրախավորվածության բարձրացման և շահառուների իրական կարիքներին դրանց համապատասխանության ապահովման նպատակներով:
- 9.2. Ներդնել խնդիրների համակարգային գույքագրման և մշտադիտարկման միասնական մեխանիզմ, որը թույլ կտա ժամանակին բացահայտել և արձագանքել առաջացող խնդիրներին:
- 9.3. Դիտարկել «մեկ պատուհանի» սկզբունքի ներդրումը, որը թույլ կտա միասնականացնել ծառայությունների մատուցումը, ապահովել տեղեկատվության արդյունավետ փոխանակումը, բարձրացնել ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և պարզեցնել շահառուների համար ծառայություններից օգտվելու գործընթացը: